



D.A.R.-ի ՉԵՌԱՄԱՏԵԱՆԸ

ՔԱՂԱՔԱՅԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

FREE GIFT
NOT TO BE SOLD

— Հրատարակում —

ԴԱՏՏԵՐԳ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

[ARMENIAN EDITION]

342

7-83

342

Ռ-83

1 MAR 20
6 FEB 2001

D.A.R.-ի Ձեռնարկներ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



Հրատարակում

ԴԱՏԵՐԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

4 APR 2013

34.489

Խմբագրում՝
ELIZABETH C. BARNEY BUEL-ի ԿՈՂՄԷ

Revised to November, 1938
Translated from 17th English Edition

Տպագրում Անգլիերէնով

Եւ Հետեւեալ Օտար-Լեզուի Թարգմանութիւններով

Հայերէն	Յունարէն	Շուէտերէն
Պոլսեան	Հունգարերէն	Նորվեկերէն
Ֆինլանտերէն	Իտալերէն	Լեհերէն
Ֆրանսերէն	Ճաբոներէն	Փորթուկէզ
Իերմաներէն	Լատիշ	Ռուսերէն
Եփրայեցերէն	Սլաւերէն	

Հրատարակչական իրաւունքը վերադառնում է
Դստերի Ամերիկեան Յեղովոյսութեան

Ազգային Ընկերակցութեան


1921, 1923, 1924, 1926, 1928, 1930, 1932, 1934, 1935, 1936, 1939

Բոլոր իրաւունքները

մէջը ըլլալով նաեւ օտար լեզուներու թարգմանութիւնը

Հեղինակին վերադառնում է:


Press of
Judd & Detweiler, Inc.
Washington, D. C.



7866-70

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՅ

	Էջ
Ճամբային Յիշատակարանաց Սրահը	4
Ողջոյնն Ընդհանուր Նախադասէն	5
Ուղերձ Բարի Դալստեան՝ Նախկ. Ընդհ. Նախադասէն	6
Նախերդանք Անկախութեան Յայտարարութեան	7
Միացեալ Նահանգաց Պալատը	8
Միացեալ Նահանգները — Անոր Սկզբնական Շրջանին Համառօտ Պատմութիւնը	9
• Միացեալ Նահանգաց Կառավարութիւնը	14
Նահանգային Կառավարութիւններ	17
Սահմանադրութիւնը ի՞նչ կ'ընէ Քաղաքացիին Համար	20
Ներածում Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան	22
Միացեալ Նահանգաց Սահմանադրութիւնը	23
Միացեալ Նահանգաց Քարտէսը	34-35
Ամերիկեան Դրօշակը	56
Դրօշակի Օրէնքներ	57
Ամերիկայի Դրօշակը Գործածելու Կանոնները	58
Ազդարարութիւններ	62
Պատուոյ Գործածութեան Պատշաճ Կերպը	64
Դրօշակը Բարեւելու Կերպը	64
Բարեւէ, Երբ Դրօշակին Հաւատարմութեան Խոստումը Կուտաս	64
Ազգային Երգին Բարեւը	65
Ազգային Երգը	65
Ամերիկացիին Հաւատամբը	66
Ամերիկա	66
Աստեղաղարդ Դրօշակը (The Star-Spangled Banner)	67



Ամերիկեան Յեղափոխութեան Ազգային Ընկերակցութեան Տունը
Յետամալը Յամաքային Յիշատակարանաց Սրահը,
Վարչական Շէնքը եւ Սահմանադրութեան Սրահը կը Յուցնէ

Ո Ղ Ջ Ո Յ Ն

Ամերիկայի Միացեալ Նահանգաց բնակիչները, բոլորն ալ, այս Ազգին ընծայած առաւելութիւններուն եւ բարիքներուն կը մասնակցին: Ռամկալարութեան մը յաջողութիւնը կախում ունի ա՛յն չափէն որ չափով որ իր քաղաքացիներուն իւրաքանչիւրը կրնայ իր ծառայութեան բաժինովը այդ ազգին յաջողութեանը սատարել: Որպէս զի, հաղարարներ, որոնք ուրիշ երկիրներու մէջ ծնած են կարենան ի՞նչպէս Ամերիկայի քաղաքացի ըլլալը սովորելու պատեհութիւնը ունենալ, Դստերք Ամերիկեան Յեղափոխութեան Ազգային Ընկերակցութիւնը երջանիկ է Հայ հասարակութեան ընծայելու Քաղաքացիութեան այս Ձեռամատեանը որ տասն եւ ութն լեզուներով պատրաստուած է:

SARAH C. ROBERT

Ընդհանուր Նախագահ

Դստերք Ամերիկեան Յեղափոխութեան

Ազգային Ընկերակցութեան

ՈՒՂԵՐՁ ԲԱՐԻ ԳԱԼՍԵՆՆ

(Գրուած 1920-ին, գրոյկիս առաջին կրատարակութեամբ կամար, Mrs. George Maynard Minor-ի կողմէ, երբ ան Դատերի Լամբրիկեան Յեղափոխութեան Ազգային Ընկերակցութեան Ընդհանուր Նախագահն էր, 1920-1923):

ԲԱՐԻ՝ դալուստ կը մաղթենք Ամերիկա բոլոր արանց, կանանց ու մանկանց՝ որոնք հաւատարիմ եւ օրէնքը յարգող քաղաքացիներ ըլլալու մտքով այս երկիրը կուզան:

Բոլոր այսպիսիներուն համար Դատերը Ամերիկեան Յեղափոխութեան Ազգային Ընկերակցութիւնը անկեղծ ու սրտաւրեւ թարի դալուստ կը մաղթէ:

Այս Ընկերակցութիւնը որ ձեզ կ'ողջունէ, կազմուած է տիկիններէ՝ որոնք կը սերին այն մարդիկներէն՝ որոնք Ամերիկեան Յեղափոխութեան մէջ կուռեցան: Այս մարդիկները կուռեցան աղատ ու ներկայացուցչական կառավարութիւն մը պահպանելու համար, որպէս զի բոլոր քաղաքացիները անոր մէջ իրենց բաժինը ունենան: Հոս մարդիկ ու կիներ կ'ապրին եւ կը դործեն խաղաղութեան ու բարօրութեան մէջ եւ իրենց կողմէ շինուած օրէնքներու տակ:

Մեր կազմակերպութիւնը հաստատուած է մեր երկիրն եւ իր հաստատութիւններուն հանդէպ հայրենասիրութիւն ու սէր սնուցանելու համար: Մեր նպատակներէն մին է օգնել այս երկիրը եկող օտարակներուն որպէս զի կարենան հասկնալ մեր կառավարութիւնը եւ դիտան մեր Դրօշակին նշանակութիւնը:

Մենք կ'ըմբռնենք որ բոլոր անոնք՝ որոնք պարկեշտ ու արդար նպատակով հոս կուզան, ինչպէս մեր նախահայրերը ըրին, պէտք է հաւասար պատեհութիւններ ու պատիւ ունենան:

Ամերիկեան քաղաքացիութեան ձեզի շնորհուիլը հպարտ պատիւ մըն է ձեզի համար: Մեր երկիրն հաւատարիմ ըլլալով եւ անոր օրէնքներուն հրահրանդելով քաղաքացիութեան արժանանալը աւելի՛ պատուաւոր է: Մենք կը հրաւիրենք ձեզ մասնակցելու այս քաղաքացիութեան երբ դուք սովորած էք անոր պարտականութիւններն ու առաւելութիւնները:

Մենք ուրախութեամբ կ'ուզենք որ դուք ալ մասնակցիք այն ազատութեան, որուն համար մեր նախահայրերը կուռեցան, բայց ձեզմէ կը խնդրենք որ յիշէք թէ՛ ազատութիւնը ապօրինութիւն չի նշանակեր: Այն ճշմարիտ ազատութիւնը զոր ձեզի կ'ընծայենք այս երկրին մէջ, կը նշանակէ ազատութիւն վայելելու բոլոր իրաւունքներն ու օրհնութիւնները զորս ան ձեզի կուտայ, այնքան ատեն որքան ատեն որ միւսներուն իրաւունքներուն եւ օրհնութիւններուն միջամուխ չէք ըլլար: Ասիկա ազատ երկիր մըն է, բայց ձեզի ազատ չ'ընեն որ ուրիշները վնասէք: Ասիկա ամէնուն համար հաւասար պատեհութեան երկիրն է: Մենք այս հաւասար պատեհութիւնները ձեզի կ'ընծայենք:

Anne Rogers Minor
(Mrs. George Maynard Minor)
Ընդհանուր Նախագահ (1920-1923)


Waterford, Conn., 1920

ՆԱԽԵՐԳԱՆԻ

ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ կեանքի ընթացքին մէջ՝ երբ ժողովուրդի մը անհրաժեշտ կը դառնայ որ ուրիշի մը հետ ունեցած իր քաղաքական կապերը խզէ եւ աշխարհի Տէրութիւններուն մէջ զատ՝ ու հաւասար դիրք մը գրաւէ, որուն համար Բնութեան եւ Բնութեան Աստուծոյ Օրէնքները իրեն իրաւունք կուտան, ի յարգանս մարդկութեան դադափարներուն իրմէ կը պահանջուի որ ան յայտարարէ այն պատճառները որոնք զինքը այդ բաժանումին կը մղեն:

Մենք կը հաւատանք որ հետեւեալ ճշմարտութիւնները ստոյգ են, թէ՛ բոլոր մարդիկ հաւասար ստեղծուած են, թէ՛ անոնք իրենց Արարիչին կողմէ որոշ եւ անփոխանցելի իրաւունքներով օժտուած են, թէ՛ ասոնց մէջ են կեանք, Ազատութիւն եւ Երջանկութեան Հետապնդում: Թէ՛ այս իրաւունքներուն տիրանալու համար մարդոց մէջ Կառավարութիւններ հաստատուած են, որոնց արդար իշխանութիւնը կառավարողներուն հաւանութեան կը ըլլի: Թէ՛ երբ ոեւէ Զեւ կառավարութիւն այս նպատակներուն եղծանիչ կը դառնայ, Ժողովուրդին իրաւունքն է զայն փոփոխել կամ քննել, եւ նոր Կառավարութիւն մը հաստատել, անոր հիմերը այնպիսի սկզբունքներու վրայ դնելով, եւ անոր իշխանութիւնը այնպիսի ձեւով մը կազմակերպելով, որ ամէնէն հաւանական կերպով իրենց ապահովութիւնն ու երջանկութիւնը պիտի իրականացնէ: Խնկնութիւնը, խիստպէս, կը ցուցնէ որ երկար ատեն՝ հաստատուած կառավարութիւնները չնչին ու վաղանցիկ պատճառներու համար պէտք չէ փոխուին. եւ, հետեւաբար, ամբողջ փորձառութիւնը՝ կը ցուցնէ որ, մարդիկ ինքզինքնին ճշդելու համար, աւելի տրամադիր են տառապիլ՝ քանի չարիքները տանելի են՝ քան թէ տապալել այն ձեւ կառավարութիւնները որոնք վարժուած են: Բայց, երբ անփոփոխելի կերպով միեւնոյն նպատակը հետապնդող երկար շարք մը զեղծումներ եւ յափշտակութիւններ զանոնք բացարձակ Բռնակալութեան ենթարկելու ծրարադիր մը կը յայտնեն, այն ատեն անոնց իրաւունքն ու պարտականութիւնն է տապալել այսպիսի կառավարութիւն մը, եւ իրենց ապագային ապահովութեան համար նոր պահապաններ հայթայթել: Ահա, այսպէս եղած է այս Դադութիւններուն համբերատար տառապանքը. եւ այսպէս է ներկայիս հրամայողական պահանջը որ կ'ստիպէ զերենք որ իրենց նախկին Կառավարական Զեւերը փոփոխեն: Մեծն Բրիտանիոյ ներկայ Թագաւորին պատմութիւնը յաճախեալ չարիքներու եւ յափշտակութիւններու պատմութիւն մըն է, որոնց ամէնուն որոշ նպատակը եղած է այս նահանգներուն վրայ բացարձակ բռնակալութիւն մը հաստատել: Ասիկա փաստելու համար, մենք իրողութիւնները կը յանձնենք անկողմնակալ աշխարհին: . . .



ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՔԷՓԻԹՈԼԸ (ՊԱԼԱՏԸ)

Washington, D. C.

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ

Անոր Սկզբնաւորութեան Համառոտ Պատմութիւնը

ԵՐԲ Գօլոմպոս, Իտալացի մը, 1492-ին Ամերիկան դտաւ, աչին ատեն աշխարհի միակ ծանօթ երկրամասերը կը կազմէին Եւրոպա, արեւմտեան և հարաւային Ասիա և հիւսիսային Ափրիկէ: Այս բոլոր երկիրները միատեղ, հաւանաբար, երկու հարիւր միլիոնէ աւելի բնակչութիւն չունէին: Այսօր սակայն, Ամերիկա միայն այդ թուոյն կէսէն աւելի բնակչութիւն ունի: Քաղաքակրթութեան կեդրոնները, այդ ատեն, Ռուսիոյ արեւմտեան կողմը գտնուող երկիրներն էին: Այս երկիրներուն մեծագոյն մասերուն մէջ կառավարութիւնները, մեծապէս, ինքնակաշնորու, թագաւորներու եւ իշխաններու ձեռքն էին: Ժողովուրդը երկրին օրէնքներուն չինութեան մէջ ձայն չունէր:

Երբ Ամերիկա նոր գտնուեցաւ, անիկա ցիրուցան Հնդկիներէ կը բնակուէր: Այն մասը որ յետոյ իրրեւ Միացեալ Նահանգներ ճանչցուեցաւ, Սպանացիներէն, Անգլիացիներէն, Ֆրանսացիներէն եւ Հոլանդացիներէն երկրախուզուած էր:

1607-ին Անգլիացիները իրենց առաջին տեւական զաղթարնակչութիւնը հաստատեցին Jamestown, Virginia-ի մէջ: Ձմեռ ատեն անոնք Աղլանդեանը նաւարկեցին երեք պղտիկ նաւերու մէջ, որոնք կը կոչուէին Sarah Constant, the Goodspeed, եւ the Discovery: Այս նաւերը՝ Captain Christopher Newport-ի առաջնորդութեան տակ՝ հարիւր եւ հինգ զաղթարնակիչներ փոխադրեցին: Վերջը, ցամաք ելլելէ յետոյ, զաղթարնակիչները քաջ ու հռչակաւոր Captain John Smith-ի կողմէ առաջնորդուեցան: Չորս ամիս առաւ մինչեւ որ անոնք ովկիանոսի այս եզերքը հասան: Ովկիանոսին վրայ անոնք ձմեռուան փոթորիկներէն տարուբերուեցան: Անոնք չատ մը նեղութիւններէ տառապեցան: Վերջապէս, Ապրիլ 26-ին, Վիրճինիայի եզերքները հասան, եւ ցամաք ելլելու ու հաստատուելու յարմար տեղ մը գտնելու համար Chesapeake Bay-էն աւելի անդին դէպի James River հարիւր մղոն եւս

նաւարկեցին: Մայիս 13-ին անոնք հաստատուելու տեղ մը գտան եւ յանուն Անգլիոյ King James-ին դայն կոչեցին Jamestown: Անոնք ցամաք ելան եւ անմիջապէս սկսան իրենց կառավարութիւնը կազմել: Այդ երկրին մէջ բացի վայրենի հնդկներէն՝ ո'չ ոք կ'ապրէր: Ո'չ քաղաքներ, ո'չ դիւղեր, եւ ո'չ ալ տուներ կային: Մի միայն խիտ անտառներ, ճահիճներ եւ լայն դետեր կային: Իրիկուն էր, այս ծովային ճամբորդները խոշեր ծառերու պուրակի մը մէջէն ծառ մը կտրեցին եւ անոր կոճղը իբրեւ խորան դործածեցին: Այս կոճղին վերեւը իբրեւ ծածկոյթ՝ ծառի մը ճիւղերուն վրայ պատռած առաւելատ մը կախեցին: Հոս, Մայիսի մեղմ օդին մէջ, տերեւներու սօսափիւնէն եւ թռչնոց իրիկուն երգերէն շրջապատուած՝ նոր երկրին մէջ առաջին անգամ բարձրացան կրօնական պաշտամունքի բացման խօսքերը. «Տէրը իր Սուրբ Տաճարին մէջ է, Անոր առջեւ ամբողջ աշխարհ թող լուռ մնայ:» Եւ հարաւային այդ ամբողջ դիշերը աշխարհ լուռ մնաց՝ մինչ խոնջեալ ծովային ճամբորդները, ծառերու տակ՝ իրենց ծածկոցներուն ներքեւ՝ կը քնանային:

Ահա՛, այսպէս, կառավարութիւնով մը եւ կրօնական պաշտամունքով մը սկսաւ առաջին մնայուն Անգլիական դաղթարնակչութիւնը Ամերիկայի մէջ:

Շատ չ'անցած զրկանքներ ու նեղութիւններ եկան դաղթարնակչներուն: Անոնք «ոսկի ու մարդարիտ» գտնելու ափնկալութեամբ հոս եկան: Հոս ո'չ «ոսկի» եւ ո'չ ալ «մարդարիտներ» կային: Անոնք շուտով սովորեցան որ ծանր աշխատանքով միայն պիտի կրնային ապրիլ: Պէտք էր որ ծառերը կըտրէին, դետինը մաքրէին, հողը հերկէին եւ եղիպտացորեն հասցնէին: Այս առաջին ճամբորդութեան միջոցին իրենց հետ ո'չ կին եւ ո'չ ալ զաւակ բերած էին, որ տուն չինելու համար իրենց օգնէին: Շատ չանցած Անգլիայէն իրենց հետ բերած ուտեստը լմնցուցին, ապրելու համար առաջին անգամին բաւականաչափ եղիպտացորեն չի մշակեցին: Յետոյ, սոսկալի անսուղութեան ու սովի ժամանակ մը եկաւ: Անիկա կոչուե-

ցաւ «Անսուղութեան Միջոց»: Շատեր մեռան: Ուրիշ շատեր ալ Հնդկներէն սպաննուեցան: Գաղթականները յուսահատած՝ պատրաստուեցան վերադառնալ. James River-ի վրայ սկսան դէպի վար նաւարկել. այս դետին մուտքը Անգլիայէն եկած պարենաւորման նաւու մը հանդիպեցան: Անոնք փրկուեցան. եւ անկից սկսեալ Jamestown-ը սկսաւ դարձանալ: Շատ չանցած ուրիշ դաղթարնակչութիւններ հաստատուեցան: Անգլիայէն աւելի դաղթարնակչներ եկան: Virginia-ի մեծ դաղութը հաստատուեցաւ: 1619-ին դաղթականները առաջին ներկայացուցչական ժողովը դումարեցին Ամերիկայի մէջ: Իւրաքանչիւր բնակչութիւն երկու մարդիկ ընտրեցին զիրենք ժողովին էջ ներկայացնելու համար: Այս մարդիկ Jamestown-ի մէջ դումարուեցան եւ դաղթականութեան օրէնքները յորինեցին: Անգլիացիները ժողովուրդով կառավարութեան կը հաւատային, եւ իրենց օրէնքներն ու ազատ հաստատութիւնները իրենց հետ բերին:

Անգլիական երկրորդ դաղթարնակչութիւնը կազմուեցաւ Plymouth, Massachusetts-ի մէջ, 1620-ին, Ուխտադնաց չայրերու (Pilgrim Fathers) կողմէ:

Անգլիոյ մէջ կային մարդիկ, որոնք թաղաւորին եկեղեցին երթալ չէին փափաքեր: Այնքան դէշ վարուեցան ասոնց հետ որ անոնք Անգլիան թողուցին: Անոնք Հոլանտա գացին, բայց հոն դո՛հ չ'մնացին: Որոշեցին Ամերիկա երթալ: Պլոյիկ նաւու մը մէջ որ Mayflower կը կոչուէր, Անգլիոյ Plymouth քաղաքէն նաւարկեցին: Դեկտեմբերի մէջ, ցուրտ օր մը, Նոր Անգլիոյ (New England) ժեռուտ ծովեզրը ցամաք ելան: Զանոնք ողջունելու համար ճերմակ բնակչութիւն չկար: Իրենց կիններուն եւ զաւակներուն համար կոճէ հիւղակներ (log houses) չինեցին: Յաջորդող տարիներուն մէջ կեանքը անոնց համար խիստ ծանր էր: Տառապելու յօժար էին, եթէ կրնային Աստուած սլաշտել այնպէս ինչպէս որ իրենք կը խորհէին ճիշտ էր: Անոնք կը հաւատային որ Աստուած զիրենք կ'առաջնորդէր: Այս հաւատքը զիրենք բաւական զօրացուց՝ իրենց տառապանքներուն տոկալու համար: Ամերիկա միջոցով պիտի յար-

դէ Pilgrim-ները, որովհետեւ անոնք ազատութեան սէրը Ամերիկա բերին. որովհետեւ անոնք տառապեցան որպէս զի այս սէրը Ամերիկայի մէջ հաստատեն: Ազատութեան այդ սէրը Ամերիկան մեծ եւ ազատ ըրած է:

Pilgrim-ներուն ունեցած ազատութեան այս դադափարը ուսումնասիրենք: Անոնք կը հաւատային որ, օրէնքները չինելու համար, ժողովուրդը ունէր իրաւունքն ու իշխանութիւնը: Անոնք կը հաւատային որ այս օրէնքները պէտք էր չինուէին «հասարակաց օգտին» համար — ամէնուն օգտին համար: Անոնք կը հաւատային թէ՛ քանի որ ժողովուրդը չինած էր օրէնքը, իւրաքանչիւրը պէտք էր հնազանդէր այս օրէնքներուն: Ճշմարիտ ազատութիւնը ուրիշներուն իրաւունքները կը յարգէ: Այս ազատութիւնը ունենալու համար Pilgrim-ները Ամերիկա եկան: Անոնք բազում տեսակ զրկանքներու տոկացին, որովհետեւ այս ազատութիւնը չփափաքեցան կորսնցնել:

Աղբախտեանի եղբրքը Անգլիա տասնեւերեք դաղութներ ունէր, որոնք մինչեւ հարիւր եւ յիսուն տարի մեծցան ու դարդացան:

Այս դաղութներուն համար շատ մը օրէնքներ Անգլիական խորհրդարանի կողմէ յորինուեցան: Գաղութները Անգլիական խորհրդարանին մէջ ներկայացուած չէին: Գաղութները խորհեցան որ առանց իրենց հաւանութեան՝ այս կերպով չինուած օրէնքներու ստիպումով հնազանդիլը անիրաւութիւն էր: Երբ George the Third-ը թագաւոր էր, ջանաց Անգլիան ու Ամերիկան ինքնակալի մը պէս կառավարել: Գաղթարարները ապրտամբեցան:

Ամերիկեան Յեղափոխութեան պատերազմը սկսաւ Ապրիլի մէջ, 1775-ին: Գաղթարարները եօթը սոսկալի տարիներ կռուեցան: George Washington-ը իրենց մեծ առաջնորդն էր: Ան կոչուած է «Իր Երկրին Հայրը»: Lafayette և Rochambeau Ամերիկացիներուն օգնեցին: Անոնք Ֆրանսայէն եկան: Յետոյ, Ֆրանսան բանակ մը եւ նաւատորմի մը զրկեց օգնելու համար: Baron Steuben, Գերմանացի մը, DeKalb, Պաւարիացի մը, եւ Kosciusko Լեհ մը, մեր զինուորներուն օգնեցին:

Տարուան մը կռիւէ յետոյ դաղութները ինքզինքնին ազատ յայտարարեցին: Անոնք ըսին որ իրենք Անգլիայէն անկախ դատ աղբ մը պիտի ըլլան: Ասիկա Յուլիս 4, 1776-ին տեղի ունեցաւ: Անկից ի վեր մենք տօնած ենք Յուլիս 4-ը իբրեւ մեր Ազգին ծննդեան տարեդարձը: Այն յիշատակալիւրը որ մեր անկախութիւնը յայտարարեց՝ կոչուած էր Անկախութեան Յայտարարութիւնը, (The Declaration of Independence): Անկախ տակաւին գոյութիւն ունի, եւ զգուշութեամբ պահպանուած է Ուաշինկթըն քաղաքին մէջ: Անկախութեան Յայտարարութիւնը կ'ըսէ թէ՛ որոշ իրաւունքներ տրուած են բոլոր մարդկանց: Ան կ'ըսէ թէ՛ այս իրաւունքներուն մէջ են կեանք, ազատութիւն եւ երջանկութեան հետապնդում: The Declaration of Independence-ը կը յայտարարէ թէ՛ մարդոց մէջ կառավարութիւններ յորինուած են այս իրաւունքները ապահովելու համար: Միացեալ Նահանգաց կառավարութիւնը իշխանութիւն ունի, որովհետեւ ժողովուրդը իր հաւանութիւնը տուած է անոր:

1783-ին, վերջապէս, Անգլիայէն անկախութիւնը շահուեցաւ եւ խաղաղութիւնը ապահովուեցաւ: 1787-ին այս նոր աղբը, որ տասնեւերեք դատ դաղութներէ կամ Նահանդներէ կը բաղկանար, Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան ներքեւ «աւելի կատարեալ միութիւն մը» կազմեց: Ասիկա խմբագրուած էր տարբեր Նահանգներու ժողովրդեան ներկայացուցիչներուն կողմէ: Վերջապէս անոնց ամէնուն կողմէ ընդունուեցաւ, եւ հիմ է այն կառավարութեան որուն ներքեւ մենք այսօր կ'ապրենք: 1788-ին՝ Սահմանադրութեան տրամադրութեան համաձայն՝ Ուաշինկթըն ընտրուեցաւ առաջին նախագահ Միացեալ Նահանգաց:

Ասիկց յայտնի է որ Ամերիկեան Յեղափոխութիւնը «յեղափոխութիւն» բառին սովորական իմաստով յեղափոխութիւն մը չէր, այլ Անգլիոյ դէմ ապստամբութիւն մը՝ եւ անկախութեան համար պատերազմ մըն էր: Յեղափոխութիւն, սովորաբար, կը նշանակէ կառավարութիւն մը տապալելու կամ նուաճելու եւ կամ երկրի մը հաստատութիւնները խոր-

տակելու փորձ մը: Ամերիկեան Յեղափոխութիւնը ասոնցմէ եւ ո'չ մին ըրաւ. ընդհակառակը, անիկա պատերազմ մըն էր որ մղուեցաւ գաղթային կառավարութիւններու սկզբունքները ՊԱՀՆԵԼՈՒ համար. պատերազմ մը, որ մղուեցաւ ՊԱՀՆԵԼՈՒ համար գաղթային ազատութիւնները զորս George the Third-ը վերցնել փորձեց: Ամերիկացիները կը դարչին այն տեսակ յեղափոխութենէն որ կը քանդէ ու կը տապալէ, որ կ'սպաննէ, կը թալանէ ու կ'այրէ: Ամերիկեան Յեղափոխութիւնը ոեւէ կառավարութիւն տապալելու փորձ մը չէր. ընդհակառակը, անիկա ազատեց եւ կաղմեց այն ազատ կառավարութիւնները զորս Ամերիկեան գաղթարարները արդէն ունէին: Գաղթարարներու յաղթութիւնը ազատ թողուց զիրենք, որ, ուրոյն դադարէին կառավարութիւններու արդէն դրած հիման վրայ ամբողջ երկրին համար ազգային կառավարութիւն մը հիմնեն: Սահմանադրութեան ներքեւ տասնեւերեք զատ դադուքները փոխակերպուեցան Միացեալ Նահանգներուն: Ահա, ա'յս է Ամերիկեան Յեղափոխութեան նշանակութիւնը:

ՄԻԱՅՆԱԼ ՆԱՀԱՆԳՈՒՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Յեղափոխութեան Պատերազմի ժամանակամիջոցին նոր գաղթավայրերը Դաշնակցային Պայմանադրութիւններուն (Articles of Confederation) տակ իրարու հետ կ'ընկերակցէին: Կար նաեւ Յամաքային Խորհրդարան մը (Continental Congress), տարբեր Նահանգներէ զրկուած ներկայացուցիչներով կազմուած մարմին մը: Պատերազմէն յետոյ ասպցուցուեցաւ որ այս ձեւով կառավարութիւն մը շատ տկար էր: Այդ կառավարութեան ներքեւ Նահանգները իրականապէս իրարու հետ միացած չէին: Իւրաքանչիւր Նահանգ փափաքեցաւ ոյժ ունենալ: Անոնք միասին չէին դործեր: Իւրաքանչիւր նահանգ իր զատ դրամը կը կտրեր: Իւրաքանչիւր նահանգ միւս նահանգներու հետ առեւտուրի համար ինքնուրոյն օրէնքները ունէր: Այս դրութիւնը չփոթութիւն յառաջ բերաւ: Նոր երկիրը դժբախտ պէտքութիւն ունէր: Բանակին, նաւատորմին եւ պատե-

րադմական սլարտքերը վճարելու համար դրամի պէտք ունէր: Խորհրդարանը իրաւասութիւն չունէր ստիպելու իւրաքանչիւր նահանգ, որ պատերազմական սլարտքի իր բաժինը վճարէ: Քանի տակաւին ազգը ո'չ առաջնորդ ունէր եւ ո'չ ալ Նախագահ, Խորհրդարանը (Congress) օրէնքներ կրնար չինել, քայց չէր կրնար դնոնք գործադրութեան դնել:

1787-ին իւրաքանչիւր Նահանգէ պատգամաւորներ Փիլատէլֆիա հաւաքուեցան: Անոնք այդ ատենը երկրին ամէնէն կարող ղեկանադէտներն էին: Անոնք կառավարական նոր ծրագիր մը պատրաստեցին, որ կոչուեցաւ Միացեալ Նահանգաց Սահմանադրութիւնը: Նահանգները համաձայնեցան հրաժարիլ իրենց կարգ մը իշխանութիւններէն եւ իրաւունքներէն յօդուտ Ազգային Կառավարութեան, եւ ասոր փոխարէն Ազգ. Կառավարութիւնն ալ թոյլատրեց որ Նահանգային կառավարութիւնները իրենց որոշ իշխանութիւնները պահեն:

Այն Սահմանադրութիւնը երկրին գերագոյն օրէնքն է, որուն առջեւ միւս բոլոր օրէնքները տեղի կուտան: Անիկա Դաշնակցային Կառավարութեան իշխանութիւն կուտայ օտար երկիրներու հետ եղած յարաբերութեանց վրայ: Անիկա իրաւունք կուտայ պատերազմ յայտարարելու կամ խաղաղութիւն կնքելու, եւ բանակին ու նաւատորմին վրայ իշխելու: Անիկա իրաւունք կուտայ տուրք հաստատելու, եւ տուրք, հարկ, եւ մաքս հաւաքելու, եւ երկրին ընդհանուր պաշտպանութիւնը հոգալու: Նահանգներու իրարու հետ եւ օտար երկիրներու հետ ունեցած վաճառականութիւնը անիկա կը կառավարէ: Գաղթականութիւնը եւ քաղաքացիութիւնը կառավարող օրէնքները ան կը չինէ: Ան կը կառավարէ թղթատարութիւնը: Ան դրամ կը կտրէ, ազգային թղթադրամը կը տպագրէ եւ թղթադրամի կեղծարարները կը պատժէ: Ան կուտայ մենաշնորհներն ու հրատարակչական իրաւունքները: Ան կ'որոշէ օրինաւոր չափերն ու կշիռները: Ասոնք են այն իշխանութիւններէն քանի մը հատը որոնցմէ Նահանգները հրաժարեցան յօդուտ Դաշնակցային կամ Միացեալ Նահանգաց Կառավարութեան: Ասկից գատ, Սահմանադրութիւնը կը պահպանէ անհա-

տական իրաւունքներն եւ անձերու ազատութիւնը — անոնց իրաւունքը՝ կեանքի, ազատութեան, սեպիականութեան, անձի, տան եւ ինչքի, անոնց իրաւունքը՝ ազատ խօսքի եւ ազատ ժողովի: Այս իրաւունքները վերցնող ո՛չ մէկ օրէնք կրնայ անցուիլ Միացեալ Նահանգներու կամ ոեւէ Նահանգի կողմէ: Ահա՛, այսպէս, Սահմանադրութիւնը ձեր ապահովութեան ու երջանկութեան պահապանն է:

Սահմանադրութիւնը կառավարութիւնը երեք մարմիններու կը բաժնէ: Օրէնսդրական մարմինը օրէնքները կը շինէ: Գործադիր մարմինը օրէնքները դործադրութեան կը դնէ: Երբ որդը, կամ Դատական մարմինը, օրինադանցները կը պատժէ: Այս մարմինը նոյն ինքն օրէնքին շուրջ եղած վէճերը կ'որոշէ:

1.— Մեր Կառավարութեան օրէնսդրական, կամ օրէնք շինող մարմինը կը կոչուի Սորհրդարան (Congress): Սորհրդարանը Ծերակոյտէ եւ Երեսփոխանական Ժողովէ (Senate and House of Representatives) կը բաղկանայ: Իւրաքանչիւր Նահանգէ երկու Ծերակուտականներ (Senators) կ'ընտրուին: Ծերակուտական մը վեց տարի կը պաշտօնավարէ: Երեսփոխանները (Representatives) կ'ընտրուին 435 երեսփոխանական վիճակներէ (congressional districts): Նահանգներու ունեցած Երեսփոխաններու թիւը իրենց ունեցած բնակչութեան համեմատ կը տարբերի: Երեսփոխան մը երկու տարի կը ծառայէ:

2.— Նախագահը Միացեալ Նահանգաց Գլխաւոր Գործադիր պաշտօնեան է: Ան չորս տարին անգամ մը կ'ընտրուի Բնորոշներու կողմէ: Բնորոշները, իրենք ալ, Ժողովուրդին կողմէ կ'ընտրուին: Նախագահին պարտականութիւնն է տեսնել որ օրէնքները կը կատարուին: Ան կը կարգէ իր դահլիճին (cabinet) տասը անդամները: Դահլիճի պաշտօնեանները կառավարութեան տարբեր պաշտօնատուներու (department) պետերն են: Անոնց պարտականութիւնն է տեսնել որ Դաշնակցային Կառավարութեան տարբեր գործունէութիւնները կը կատարուին: Կառավարական տարբեր բաժիններն են. Արտաքին

Գործոց Նախարարութիւն (Department of State), Գանձային Նախարարութիւն (Department of Treasury), Պատերազմական Նախարարութիւն (Department of War), Արդարադատական Նախարարութիւն (Department of Justice), Թղթատարական Նախարարութիւն (Post - Office Department), Ծովային Նախարարութիւն (Department of Navy), Ներքին Գործոց Նախարարութիւն (Department of Interior), Երկրագործական Նախարարութիւն (Department of Agriculture), Առևտրական Նախարարութիւն (Department of Commerce), եւ Աշխատանքական Նախարարութիւն (Dept. of Labor): Նախագահը Սորհրդարանին կը յանձնարարէ օրէնքներու անցումը, եւ Սորհրդարանին անցուցած վճիռները ստորագրելու կամ մերժելու առանձնաշնորհութիւնն (veto) ունի:

Նախագահը կը բանակցի դաշնադրութիւններ օտար երկիրներու հետ, բայց ասոնք պէտք է վաւերացուին — այսինքն, հաստատուին կամ հաւանուին — Ծերակոյտին (Senate) կողմէ: Նախագահը բանակին եւ Նաւատորմին վերին հրամանատարն է:

3.— Միացեալ Նահանգաց արդարադատական իշխանութիւնը տրուած է մէկ Գերագոյն Դատարանի, (Supreme Court) եւ երկու խումբ ստորագու զատարաններու: Գերագոյն Դատարանը կը պահպանէ Սահմանադրութիւնը եւ՝ Միացեալ Նահանգաց Սորհրդարանի՝ կամ ոեւէ Նահանգի կողմէ անցուած ոեւէ օրէնք Սահմանադրութեան ոեւէ մէկ պայմանը կ'եղծանէ թէ ոչ՝ ան կը վճռէ: Ան, միեւնոյն կերպով, նաեւ կը պահպանէ օտար երկիրներու հետ ունեցած մեր դաշնադրութիւնները:

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1776-ին, երբ տասնեւերեք դադութիւնները Մեծն Բրիտանիայէն իրենց անկախութիւնը յայտարարեցին, անոնք անկախ Նահանգներ եղան: Անոնցմէ ոմանք, Ժամանակի մը համար, իրենց կառավարութիւնները չարունակեցին իրենց Անգլիական

7866-7982

հրովարտականներուն տակ: Ուրիշներ՝ ժողովուրդէն ընտրուած սահմանադրութիւններու տակ՝ նոր կառավարութիւններ կազմեցին: Ատեն ատեն նոր Նահանգներ ընդունուած են Միութեան մէջ: Բոլոր Նահանգները ժողովուրդին կողմէ ընդունուած սահմանադրութիւններ ունին: Նահանգային կառավարութիւններու իշխանութիւններն ալ բաժնուած են օրէնսդրական, վարչական եւ դատական ճիւղերու:

Նահանգային օրէնսդրական ժողովները Նահանգին օրէնքները կը շինեն: Իւրաքանչիւր օրէնսդիր ժողով կը կազմուի երկու տուներէ, որոնք սովորաբար կ'անուանուին Մերակոյտ (Senate) եւ Ժողով (Assembly): Այս օրէնսդիր մարմիններու անդամները ուղղակի ժողովուրդին կողմէ կ'ընտրուին: Անոնց պաշտօնավարութեան շրջանը կը տարբերի տարբեր Նահանգներու մէջ:

Վարչական մարմինը հոգ կը տանի որ օրէնսդիր մարմնոյ անցուցած օրէնքները ի գործ դրուին: Վարչական գլխաւոր պաշտօնեան՝ որ կը կոչուի Կառավարիչ՝ (Governor) ժողովուրդին կողմէ կ'ընտրուի: Իր պաշտօնավարութեան շրջանը տարբեր Նահանգներու մէջ մէկէն մինչեւ չորս տարի կը տարբերի: Ան իր իշխանութեան տակ ունի զատ գիւհներ (bureaus) որոնք օրէնքի տարբեր հանգամանքներով կ'ըրադին, ինչպէս՝ հողադործային, աշխատաւորական, դրամական, ուսումնական եւ զինուորական:

Արդարադատական մարմինը կազմուած է Նահանգային դատարաններէ: Այս դատարանները օրէնքները կը կիրարկեն իրենց ներկայացուած դատերուն: Այս դատարանները իրենց անունով եւ իրենց վարած դատերուն համաձայն կը տարբերին: Բոլոր Նահանգներու մէջ դատարաններ կան որոնք միմիայն եղերական դատեր կը վարեն: Ուրիշ դատարանները միայն քաղաքային դատեր կը վարեն: Կան նաեւ բարձրագոյն դատարաններ (superior courts) ուր ժողովուրդը իր դատերը կը տանի վերաքննութեան համար:

Ինքնակառավարութիւնը Ամերիկեան Ռամկավարութեան սկզբունքներէն մին է: Որպէս զի ժողովուրդը իր սեփական

համայնքին կառավարութեան մէջ գործօն մասնակցութիւն ունենայ, Նահանգը դաւառներու բաժնուած է:

Գաւառներու քուէատունները կ'ընտրեն իրենց պաշտօնեաները որոնք դաւառին գործերուն ղեկավարութիւնը կ'ստանձնեն: Միացեալ Նահանգաց մէջ 3000-է աւելի դաւառներ (county) կան: Տարածութեամբ անոնք կը տարբերին: Մէսէչուսէցի Պրիւթըլ դաւառը տարածութեամբ 25 քառ. մղոն է: Մօնթանայի Քըսթըր դաւառը 20,175 քառ. մղոն ունի: Գաւառը կը շինէ եւ նորոգութեան մէջ կը պահէ կամուրջներ եւ պողոտաներ եւ դաւառային աղբատանոցին ծախսերը կը հոգայ: Գաւառը՝ խաղաղութիւնը պահելու, ոճիրի համար ձերբակալելու եւ պատժելու դերին մէջ՝ Նահանգը կը ներկայացնէ: Գաւառներէ ոմանք նաեւ ուրիշ բաներ կ'ընեն:

Աւանային եւ քաղաքային կառավարութիւնները տեղական կառավարութիւններու ուրիշ մէկ ձեւերն են: Նիւ-Ինկլէնտի մէջ աւանային կառավարութիւնը նախնական դաղթարարներու կողմէն սկսաւ: Անոնք պղտիկ եւ սեղմ դաղութներու մէջ կ'ապրէին: Աւաններու եւ քաղաքներու մէջ ապրող ժողովուրդները տեղական գործերը իրենք կը ղեկավարեն: Դպրոցները, առողջապահական պաշտօնատունը, թաղային խորհուրդը եւ եւ տեղւոյն խաղաղութեան պահպանութիւնը իրենց վերին հսկողութեան տակ է: Անոնք կ'ընտրեն իրենց փափաքած ներկայացուցիչները որ զիրենք կը ներկայացնէ Նահանգային ժողովին մէջ: Ամէն մարդ ու կին հպարտ պէտք է զգայ զիտնալու որ ինք մաս ու բաժին ունի իր տեղական կառավարութեան մէջ: Իւրաքանչիւր անհատ պէտք է ինքզինք պատրաստէ ուղղամիտ եւ գործօն դեր մը ստանձնելու իր աւանին կամ քաղաքին վարչութեան մէջ:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ Ի՞ՆՉ Կ'ԸՆԷ
ՔԱՂԱՔԱՑԻՒՆ ՀԱՄԱՐ

Գրուած

Henry A. Wise Wood-ի կողմէ

(Մասամբ վերատպուած Սահմանադրական կառավարութեան Ազգ. Ընկերակցութեան քոյտուութեամբ)

Միացեալ Նահանգաց ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ կ'ըսէ. — «Ո՛չ մէկ անձ կեանքէ, աղատութենէ եւ սեփականութենէ պիտի զրկուի առանց օրինաւոր դատավարութեան (without due process of law) . եւ ո՛չ ալ անհատական սեփականութիւն պիտի գրաւուի՝ հանրային նպատակի համար՝ առանց արդար վարձատրութեան»:

Երբ դորձաւոր մը իր դործիքներուն եւ խնայողութեան տէր կրնայ դառնալ՝ անհատական սեփականութեան իրաւունքը կը վայելէ:

Ան անհատական սեփականութեան իրաւունքը կը վայելէ երբ կրնայ իր խնայողութիւնը դրամատուն դնել եւ կամ անով տուն մը գնել:

Ան անհատական սեփականութեան իրաւունքը կը վայելէ՝ երբ իր խնայողութեամբ խանութ մը կրնայ դնել եւ անոր տէր դառնալ:

Անհատական սեփականութեան իրաւունքը, այսպէսով կարելի կ'ընէ որ դորձաւոր մը տանտէր եւ դորձատէր դառնայ:

Ան անհատական սեփականութեան իրաւունքը կը վայելէ երբ իր խանութէն ըրած խնայողութեամբ Liberty Bonds կը գնէ եւ անոնց տէր կը դառնայ: Անհատական սեփականութեան իրաւունքը, այսպէս, միջոց կը դառնայ որ դորձաւոր մը ոչ թէ միայն դորձատէր՝ այլ նաեւ բաժնետէր (bondholder) ըլլայ, — դրամատէր մը՝ որ չահադրութեան համար դրամ ունի:

Ահա՛, այս կերպով կազմուած է Ամերիկեան ճարտարա-ուեստը:

Ան կազմուած է յաջողութեան տարբեր սանդղամատներուն վրայ դնուող դորձաւորներով: Անոնք որ այսօր սանդղամատին դադարը կը դնուին՝ առեն մը կար որ անոր յատակը կը դնուէին, եւ Սահմանադրութեան պաշտպանութեան տակ է որ անոնք անընդհատ մագլցելով հոն հասան:

Անոնք՝ որոնք այժմ յաջողութեան սանդղակին յատակը կը դնուին նմանապէս Սահմանադրութեան պաշտպանութիւնը կը վայելեն եւ հաւասար իրաւունք ունին մագլցելու: Անոնք կրնան այնքան բարձրանալ՝ որքան որ իրենց խելքը, աշխատութիւնը եւ լաւ նկարադիրը զիրենք կրնան բարձրացնել:

Սահմանադրութիւնը, այսպէս, կ'ապահովէ բաց եւ ազատ սանդղաղ մը որ ձրի է ամէնուն համար: Ուեէ մէկը, առանց տարիքի եւ սեռի խտրութեան, կրնայ՝ իր անհատական կարողութեան թոյլտուութեան չափով այս յաջողութեան սանդղամատին վրայ բարձրանալ, բայց Սահմանադրութիւնը վերելակ մը (elevator) չի հայթայթեր բարձրացնելու համար ծոյն ու անձեռնհասը յաջողութեան սանդղակին վրայ՝ աշխատասէրին եւ ճարտարին հետ մէկտեղ:

Սահմանադրութիւնը, իրապէս կ'ըսէ. —

«Ա՛յս կողմէն քալէ դէս ի յաջողութիւն: Ես քեզ պիտի պաշտպանեմ, քու ճամբուղ մէջ, արդարամտութեան եւ ուղղամտութեան կանոններուն համաձայն, բայց դուն՝ քո՛ւ սեփական ուժովդ, քո՛ւ ոտքովդ, քո՛ւ ձեռքերովդ եւ քո՛ւ խելքովդ պէտք է մագլցիս յաջողութեան սանդղաղը:

«Ես քեզ կը պաշտպանեմ երբ դուն դորձաւոր ես, որովհետեւ դորձաւորները աշխարհի համար անհրաժեշտ են: Քեզ կը պաշտպանեմ երբ դուն դորձատէր ըլլաս, որովհետեւ դորձատէրն ալ անհրաժեշտ է աշխարհի համար: Առանց անոր ճարտարութեանտը պիտի չի կրնար կազմակերպուիլ, եւ առանց կազմակերպուած ճարտարարութեանտի աշխարհս չի կրնար ապրիլ:

«Ես քեզ կը պաշտպանեմ՝ երբ դուն արդար վաստակով

խնայած դրամդ շահու գնելով բաժնետէր մը կ'ըլլաս — դրամատէր մը: Այն մարդը որ դրամ կը խնայէ դրամատէր մըն է, հոգ չէ թէ ան դրամը խնայած ըլլայ իր շարաթափճարէն, տարեվճարէն եւ կամ իր ամբողջ կեանքի չըջանին:

«Ես կը պաշտպանեմ աշխատաւորը, որովհետեւ ազգը անոր աշխատանքին պէտք ունի. ես կը պաշտպանեմ նաեւ դործատէրը, որովհետեւ ազգը կազմակերպուած ճարտարարուեստի պէտք ունի:

«Առա'նց աշխատաւորի, առա'նց դործատէրի եւ առա'նց անոնց՝ որոնք իրենց դրամը խնայած եւ դրամատէր դարձած են ազգը չկրնար շարունակել ապրիլ, ո'չ կրնայ իր քաղաքացիները ոճիւրէ եւ յեղափոխութենէ պաշտպանել, ո'չ կրնայ պատերազմիլ ինքզինքը պաշտպանելու համար օտար արշաւանքի եւ տիրացումի դէմ եւ ո'չ ալ կրնայ ինքզինքը փրկել ռեւէ տեսակ անդարմանելի աղէտէ:

ՆԵՐԱԾՈՒՄ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Քաղուած մը

Հետեւեալը քաղուած մըն է Merrill E. Gates-ի LL.D., L.H.D., «Ներածում Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան» դրութեանէն. վերարտադրուած Սահմանադրական Կառավարութեան Ազգ. Ընկերակցութեան թոյլտուութեամբ:

«Մեր Սահմանադրութիւնը մեր սիրելի ազգին բո'ւն իսկ հոգին եւ կեանքն է: Ուրիշ ազգեր զայն ընդօրինակած են: Վստահաբար մեր նախահայրերը կ'սպասէին որ Միացեալ Նահանգաց Ժողովուրդը ճանչնայ Սահմանադրութիւնը իր բոլոր էական կէտերուն մէջ:

«Սահմանադրութիւնը եւ Աշխատաւորը

«Մասնաւորապէս իւրաքանչիւր մարդ եւ կ'ին դործաւոր պէտք է ճանչնայ Սահմանադրութիւնը: Անիկա դործաւորին ամենալաւ բարեկամն է: Ան ո'չ թէ միայն կը պաշտպանէ անոր

անհատական աղատութիւնն եւ քաղաքական իրաւունքները, այլ նաեւ կ'ապահովէ անոր շարաթականին կանոնաւոր եւ ամբողջական վճարումը: Ան կը պաշտպանէ անոր խնայողութիւնը, կը պահպանէ անոր տունը, կը յարգէ եւ կը պաշտպանէ իր ընտանեկան կեանքը: Դատաւորներն ու դատարանները՝ որոնցմէ ոմանց մէջոնները թերեւս զինք վշտացուցած ըլլան՝ այսուհանդերձ, անոնք իր ամենալաւ բարեկամներն են: Մեր դատաւորներուն արդարութեան խոր հասկացողութեան եւ դատարարակուած իմացականութեան շնորհիւ է որ աշխատաւորը կը պաշտպանուի աւերիչ արդիւնքին դէմ մոլորած տնօրէն կողմէ փորձուած օրէնսդրութեանց որոնք (եթէ կարենային յաջողիլ) պիտի տապալէին այն հիմնական օրէնքը որ մեզ կը պաշտպանէ: Մեր կառավարութեան զգոյշ եւ արդար վարչութիւնն է որ՝ պաշտպանուած եւ ապահովուած մեր դատարաններու կողմէ՝ մեր ազգային կեանքը կ'ապահովէ:

«Սահմանադրութիւնը եւ Դատարանները

«Ուսումնասիրէ՛ Սահմանադրութիւնը: Տես՝ թէ օրէնքն ու դատարանները ի՞նչպէս քեզ կը պաշտպանեն: Մի՛ թոյլատրեր որ ամբոխավարներ քեզ համոզեն ջատագովելու այնպիսի օրինական փոփոխութիւններ՝ որոնք անկարելի կը դարձնեն մեր դատարաններուն ունենալու աներկիւղ եւ կորովամիտ դատաւորներ, որ շարունակեն պաշտպանել մեզ մեր սահմանադրական իրաւունքներուն մէջ:

«Քաղաքացիութեան Փառքն ու Պատասխանատուութիւնը

«Աշխարհի ամէնէն մեծ Հանրապետութեան քաղաքացի մը ըլլալը պզտիկ բան մը չէ՛: Հոս քուէատու ըլլալը մեծ պատասխանատուութիւն մըն է: Իբրեւ Ամերիկեան քուէատու մը պէտք է դուն քու իրաւունքդ ու պատասխանատուութիւնդ դիտնաս, ինչպէս նաեւ ճանչնաս Սահմանադրութեան ներքեւ ունեցած իրաւունքդ ու պարտականութիւնդ: Դուն ինքդ խորհէ ասոնց մասին երբ մեր երկրին մեծ ու հիմնական օրէնքին պայմանները կը կարդաս:

«Որպէս Ամերիկեան քաղաքացիներ՝ առնենք օրինակ մը մեր քաղաքացիական իրաւանց հատորէն. կարդա՛նք, խորհի՛նք անոր վրայ, եւ մեր բարեկամներուն հետ քննենք Սահմանադրութիւնը, ուսումնասիրենք անոր սկզբունքները, գիտնա՛նք զանոնք, ահա՛, այն ատեն է որ մենք պիտի սիրենք զայն: Մի՛ խորհիր որ դուն Ամերիկեան կեանքը լաւ եւ յաջող կերպով կրնաս ապրիլ առանց գիտնալու այդ կեանքին կանոնները: Մէ՛կ դրօշակ, մէ՛կ հայրենիք եւ մէ՛կ ազդ: Սիրենք մեր հայրենիքը եւ յարգենք մեր Դրօշակը: Մեզի համար չէ այն անիշխանական միջազգայնութեան կարմիր դրօշակը, այլ կարմիրը, ձերմակը եւ կապոյտը՝ որուն համար մեր հայրերը, եղբայրները եւ զաւակները զոհուեցան, եւ որուն ներքեւ, Աստուծոյ կամքով, մենք պիտի ապրինք, եւ որուն համար՝ եթէ պէտք ըլլայ՝ պիտի զոհուինք — մնալով հաւատարիմ ամբողջ մարդկային ցեղի եղբայրութեան, բայց ամէնէն առաջ՝ ըլլալով հաւատարիմ մեր տան, մեր ընտանիքին, մեր հասարակութեան եւ մեր սիրած երկրին»:

ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Մենք՝ Միացեալ Նահանգաց ժողովուրդը՝ աւելի կատարեալ Միութիւն մը կազմելու, Արդարութիւն հաստատելու, առտնին Անդորութիւն ապահովելու, հանրային պաշտպանութեան հոգ տանելու, հանրային Բարօրութիւնը յառաջացնելու, եւ Ազատութեան Օրինութիւնները մեզի եւ մեր Ապագայ Սերունդին ապահովելու համար, կը տնօրինենք եւ կը հաստատենք այս Սահմանադրութիւնը Ամերիկայի Միացեալ Նահանգաց համար:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Հատուած 1. Ասով տրուած ամբողջ օրէնսդրական Իշխանութիւնը պիտի պատկանի Միացեալ Նահանգաց Քօնկրէսին, որ պիտի բաղկանայ Ծերակոյտէ մը (Senate) եւ Ներկայացուցչական Տունէ մը (House of Representatives):

Հատուած 2. Ներկայացուցչական Տունը պիտի բաղկանայ անդամներէ որոնք երկու տարին անգամ մը պիտի ընտրուին զանազան Նահանգներու Ժողովուրդին կողմէ, եւ իրաքանչիւր Նահանգի Ընտրողները՝ իրրեւ Ընտրողներ Նահանգային Օրէնսդրական Մարմնոյ այս ամենաբազմանդամ ձիւղին՝ պիտի իրենց պաշտօնի կոչումին համապատասխան արժանիք կամ յարմարութիւն ունենան:

Ներկայացուցիչ մը առնուաղն Քսան եւ Հինգ Տարեկան, Միացեալ Նահանգաց Եօթը Տարի Քաղաքացի, եւ իր ընտրութեան ատենը իր ընտրուած Նահանգին մէջ Բնակիչ մը պիտի ըլլայ:

*[Ներկայացուցիչները եւ ուղղակի Տուրքերը (direct Taxes հաւասարապէս պիտի բաշխուին այս Միութեան ներկայ եւ յետոյ անոր մէջը առնուելիք Նահանգներուն միջեւ, ի-

*Փակակնի մէջ պարունակուող պարբերութիւնը բարեփոխուած է 14-րդ բարեփոխութեան 2-րդ հատուածով, (էջ 50):

րենց փոխադարձ թիւերուն համաձայն: Այս թիւերը պիտի որոշուին Ազատ Անձերու ամբողջական թուոյն վրայ աւելցընելով անոնք՝ որոնք Տարիներու Մասնաւոր Շրջանի մը համար Ծառայութեան մէջ կը գտնուին (գուրս ձգելով տուրքադուրկ Հնդկները) եւ միւս բոլոր Անձերու երեք-հինգերորդը:] Բուն թուարկութիւնը պիտի կատարուի Միացեալ Նահանգաց Խորհրդարանին առաջին ժողովէն յետոյ, երեք տարուան ժամանակամիջոցին, եւ անկէ յետոյ իւրաքանչիւր Տասը տարին անգամ մը, Օրէնքին Տրամադրութեան համաձայն: Ներկայացուցիչներու թիւը, իւրաքանչիւր Երեսուն Հազար բնակչութեան մէկ Ներկայացուցիչ համեմատական չափը պիտի չանցնի, բայց իւրաքանչիւր Նահանգ, անսլատաճառ, գոնէ մէկ Ներկայացուցիչ պիտի ունենայ, եւ մինչեւ այս թուարկութեան կատարումը Նիւ Հէմփշիր Նահանգը երեք, Մէսս. ութը, Բոս Այլլնոս եւ Providence դադութ (Plantation) մէկ, Քընն. հինգ, Նիւ Եորք՝ վեց, Նիւ Ճըրզի՝ չորս, Փէնն. ութ, Տէլլը-ուէյր՝ մէկ, Մէրիլէնտ՝ վեց, Վերմոնթիա՝ տասը, Նորթ Քէ-րոլայնա՝ հինգ, Սաութհ Քէրոլայնա՝ հինգ եւ Ճորճիա՝ երեք ներկայացուցիչներ ընտրելու իրաւունք պիտի ունենան:

Երբ ոեւէ Նահանգէ Ներկայացուցչական աթոռի թափուրութիւն (vacancy) պատահի, Նահանգի Գործադիր Իշխանութիւնը Ընտրութեան Հրաման (Writs of Election) պիտի հանէ այդ թափուր աթոռը լեցնելու համար:

Ներկայացուցչական Տունը ինք պիտի ընտրէ իր Տան Ատենապետը եւ Պաշտօնեաները, եւ ինք միայն պիտի ունենայ լիովին Ամբաստանական Իշխանութիւն (sole Power of Impeachment):

Հատուած 3. Միացեալ Նահանգաց Ծերակոյտը պիտի բաղկանայ իւրաքանչիւր Նահանգէ երկուական Ծերակուտականներէ, իրենց պատկանեալ Նահանգին Օրէնսդրական Մարմնոյ (Legislature) կողմէ ընտրուած, վեց տարուան համար, եւ իւրաքանչիւր Ծերակուտական պիտի ունենայ մէկ Գուէ:

Առաջին Ընտրութենէն անմիջապէս յետոյ Ծերակուտականները պիտի հաւաքուին եւ բաժնուին երեք կիւրդերու:

Առաջին կարգի Ծերակուտականներուն աթոռները պիտի պարպուին երկրորդ տարուան վախճանին, երկրորդ կարգի Ծերակուտականներունը՝ չորրորդ տարուան վախճանին եւ երրորդ կարգի Ծերակուտականներունը՝ վեցերորդ տարուան վախճանին, այնպէս որ Ծերակուտականներու թուոյն մէկ երրորդը ընտրուի իւրաքանչիւր երկու տարին անգամ մը: Եւ եթէ հրաժարումով եւ կամ ոեւէ կերպով աթոռի թափուրութիւն պատահի ոեւէ Նահանգի Օրէնսդրական Մարմնոյ դադարի ժամանակամիջոցին, Նահանգին Գործադիր Իշխանութիւնը կրնայ ժամանակաւոր կարգադրութիւններ ընել մինչեւ Օրէնսդիր Մարմնոյ յաջորդ ժողովը, որ պիտի լեցնէ աթոռի թափուրութիւնը:

Ծերակուտական մը առ նուազն Երեսուն Տարեկան՝ եւ Միացեալ Նահանգաց Ինն Տարի քաղաքացի եղած ըլլալու է, եւ ընտրութեան ատեն զինքը ընտրող Նահանգին Բնակիչ ըլլալու է:

Միացեալ Նահանգաց Փոխ-Նախագահը պիտի ըլլայ Ծերակոյտին Նախագահը. բայց ան Գուէ ունենալու չէ՝ ի բաց առեալ այն պարագայէն՝ երբ Ծերակոյտի Գուէները հաւասարապէս բաժնուած են:

Ծերակոյտը կ'ընտրէ իր միւս Պաշտօնեաները, եւ ժամանակաւոր (pro tempore) նախագահ մը, ի Բացակայութեան Փոխ-Նախագահին եւ կամ Միացեալ Նահանգաց Նախագահի պաշտօնը կատարած պահուն:

Ծերակոյտը պիտի ունենայ բոլոր Ամբաստանութիւնները դատելու միակ Իշխանութիւնը: Ծերակուտականները Երգմամբ պիտի նստին այդ Նպատակին համար: Երբ Միացեալ Նահանգաց Նախագահն է ամբաստանեալը՝ այն ատեն Միացեալ Նահանգաց Դատարանապետը (Chief Justice) պէտք է նախագահէ և ո'չ մէկ անձ պէտք է դատաւարտուի առանց ներկայ Անդամոց երկու-երրորդի Համաձայնութեան:

Ամբաստանութեան Պարագային տրուած վճիռը ամբաստանեալը պաշտօնանկ ընելէ, եւ անոր յանուն Միացեալ Նահանգաց Պատուոյ, Վստահութեան կամ Շահու ոեւէ Պաշտօնի

անյարմար նկատուելէ անդին պիտի չանցնի. դատաւարտեալ Անձը, սակայն, Օրէնքի տրամադրութեան համաձայն, Ամբաստանութեան, Դատաւարութեան, Դատաւարութեան եւ Պատժոյ Ենթակայ է:

Հատուած 4. Իւրաքանչիւր Նահանգի Օրէնդրական Մարմինը պիտի որոշէ Ծերակուտականներու եւ Ներկայացուցիչներու ընտրութեան ժամանակը, Տեղը եւ Կերպը, բայց Միացեալ Նահանգաց Խորհրդարանը ո'եւէ ժամանակ կրնայ, բացի Ծերակուտականներու վայրերու ընտրութենէն, օրէնքին միջոցաւ փոփոխել այս կարգադրութիւնները:

Խորհրդարանը՝ առ նուազն տարին անգամ մը՝ եւ այն ալ Դեկտ.-ի առաջին երկուշաբթի օրը պիտի հաւաքուի, ի բաց առեալ այն պարագայէն՝ երբ օրէնքով ուրիշ օր մը կ'որոշուի:

Հատուած 5. Միացեալ Նահանգաց Խորհրդարանի իւրաքանչիւր Տուն իր անդամներուն ընտրութեանց, Յարմարութեանց եւ Տեղեկագրի Առաքումներուն Դատաւորը պիտի ըլլայ, եւ իւրաքանչիւր Տան Մեծամասնութիւնը պիտի կազմէ Գործառնութեանց Օրինական Թիւը. բայց փոքրամասնութիւնը կրնայ ժողովը օրէ օր Յետաձգել, եւ իշխանութիւն ունենալ բացակայ անդամներու ներկայութիւնը պարտաւորելու, Տան պայմանադրած կերպով եւ տուգանքներով:

Իւրաքանչիւր Տուն կրնայ որոշել իր ժողովի Ընթացքին Կանոնները, պատժել իր Անդամներուն Անկանոն Ընթացքը, եւ երկու-երրորդի Համաձայնութեամբ արւարձսել իր Անդամներէն ոեւէ մէկը:

Իւրաքանչիւր Տուն իր Գործառնութեանց Օրադրութիւնը պիտի պահէ եւ ժամանակ առ ժամանակ հրատարակէ զայն, բացի այն Մասերէն որոնք՝ իրենց դատողութեամբ՝ Գաղտնի պիտի պահուին, եւ իւրաքանչիւր Տան Անդամներու ոեւէ խնդրոյ շուրջ Այո-ներն ու Ոչ-երը՝ ներկաներու մէկ-հինգերորդին Փափաքին համաձայն՝ Օրադրին մէջ պիտի արձանագրուին:

Երկու Տուններէն ոչ մէկը, Խորհրդարանի Նիստի տեւողութեան միջոցին, առանց միւսին հաւանութեան երեք օրէն աւե-

լի ժողովը պիտի յետաձգէ եւ կամ Խորհրդարանի յատկացուած վայրէն դուրս, ուրիշ Տեղ, ժողով կազմէ:

Հատուած 6. Ծերակուտականները եւ Ներկայացուցիչները իրենց Ծառայութեան համար Վճարում պիտի ստանան, եւ այս Վճարումը Օրէնքով պիտի հաստատուի եւ տրուի Միացեալ Նահանգաց Գանձէն: Ամէն պարապայիս տակ՝ անոնց անձը Դաւաճանութեան (Treason), Տիրադրութեան (Felony) եւ Խաղաղութեան Բռնաբարումի (Breach of peace) ատեն՝ Ձերբակալութենէ զերծ պիտի ըլլայ իրենց պատկանեալ Տուններու Նիստին Ներկայութեան Պահուն եւ կամ Նիստին երթալու եւ վերադառնալու ատեն. եւ իւրաքանչիւր Տան մէջ եղած ոեւէ ճառախօսութեան կամ Վրճարանութեան համար անոնք ժողովէն դուրս ուրիշ ո'չ մէկ Տեղ հարցուփորձի պիտի ենթարկուին:

Ոչ մէկ Ծերակուտական կամ Ներկայացուցիչ՝ իր պաշտօնավարութեան ժամանակաշրջանին՝ Միացեալ Նահանգաց Իշխանութեան տակ եղող ուրիշ ոեւէ քաղաքային Պաշտօնի պիտի ընտրուի կամ անոր Վարձատրութիւնը աւելնայ իր Պաշտօնավարութեան Շրջանին. ոեւէ մէկը որ արդէն կը պաշտօնավարէ Միացեալ Նահանգաց Իշխանութեան տակ, իր պաշտօնավարութեան Շրջանին Խորհրդարանի ոեւէ մէկ Տան անգամ պիտի չընտրուի:

Հատուած 7. Եկամուտի համար հանուած բոլոր Օրինադիւծերը (Bills) ծագում պիտի առնեն Ներկայացուցչական Տան մէջ. իսկ Ծերակոյտը կրնայ ուրիշ Օրինադիւծեր առաջարկել եւ կամ անոնց Բարեփոխումին համամիտ ըլլալ կամ օժանդակել, ինչպէս որ ան կ'ընէ ուրիշ Օրինադիւծերու համար:

Իւրաքանչիւր Օրինադիւծ Ներկայացուցչական Տունէն եւ Ծերակոյտէն անցնելէ յետոյ, Օրէնք ըլլալէ առաջ պիտի ներկայացուի Միացեալ Նահանգաց Նախագահին՝ որ, եթէ համամիտ է՝ պիտի ստորագրէ, իսկ եթէ համամիտ չէ՝ իր Առարկութիւններով մէկտեղ պիտի վերադարձնէ զայն անոր ծագում առած Տան, որը՝ իր կարգին, Նախագահին Առարկու-

Թիւնները Օրադրին մէջ անցընելէ յետոյ, Օրինադիւծը վերանդր-կատուութեան կ'առնէ: Երբ, վերանկատուութենէ յետոյ, Տան երկու-երրորդը հաւանի վերըստին անցընել Օրինադիւծը՝ այն ատեն՝ Նախագահին Առաքիւթիւններուն հետ մէկտեղ պիտի ղրկէ զայն միւս Տան, որու կողմէ ալ, նմանապէս, պիտի վերանկատուի եւ երբ անոր ալ երկու-երրորդին կողմէն անցուի, այն ատեն այդ Օրինադիւծը պիտի ըլլայ Օրէնք: Բոլոր այսպիսի պարադաներու տակ, սակայն, Խորհրդարանի երկու Տան ալ քուէները պիտի որոշուի Այո եւ Ոչ ձայնով, եւ Օրինադիւծին ի նպաստ կամ հակառակ քուէարկողներուն անունները անցուին երկու Տուններու ալ Արձանագրութեան (Journal)-ին մէջ, փոխադարձաբար: Եթէ Միացեալ Նահանգաց Նախագահին ներկայացուած Օրինադիւծ մը (Կիրակիներէ դուրս) տասը Օրուան մէջ չի վերադարձուի, Օրինադիւծը Օրէնք կ'ըլլայ այնպէս՝ ինչպէս որ պիտի ըլլար՝ եթէ Նախագահը ստորագրած ըլլար, ի բաց առեալ այն պարադայէն երբ Միացեալ Նահանգաց Խորհրդարանի Ժողովին Յետաձգումը Օրինադիւծին Վերադարձը արգիլէ, այս Պարագային Օրինադիւծը Օրէնք մը պիտի չըլլայ:

Իւրաքանչիւր Հրաման, Որոշում կամ Քուէ՝ որուն համար Ծերակոյտին եւ Ներկայացուցչական Տան համամտութիւնը անհրաժեշտ է՝ (ի բաց առեալ Ժողովը Յետաձգելու խնդիրէն) պիտի ներկայացուի Միացեալ Նահանգաց Նախագահին, եւ Գործադրութեան Դրուելէ առաջ կամ Նախագահին կողմէ պիտի ստորագրուի եւ կամ, հակառակ պարագային, Խորհրդարանի երկու Տուններու երկու-երրորդին կողմէ վերըստին անցնի, Օրինադիւծ մը Պարագային տրուած Կանոններուն եւ Սահմանութեանց տրամադրութեան համաձայն:

Հաւուած 8. Միացեալ Նահանգաց Խորհրդարանը իշխանութիւն պիտի ունենայ Տուրք դնելու եւ Մաքսեր, Հարկեր, Սակեր հաւաքելու, Աղղային Պարտքերը վճարելու եւ Հանրային Պաշտպանութեան ու Միացեալ Նահանգաց Բարօրութեան հոգ տանելու: Բայց Մաքսերը, Հարկերը եւ Սակերը միօրինակ պիտի ըլլան ամբողջ Միացեալ Նահանգաց մէջ:

Միացեալ Նահանգաց վարկին վրայ Դրամական Փոխառութիւն կնքելու իշխանութիւն պիտի ունենայ:

Ան իշխանութիւն պիտի ունենայ օտար Երկիրներու, Միջ-Նահանգային եւ Ամերիկեան Հնդիկ ցեղերու հետ եղած Առեւտուրը Կանոնաւորելու կամ անոնց վրայ հսկելու:

Քաղաքացիութեան համար միօրինակ Կանոններ՝ ինչպէս նաեւ Սնանկութեան համար ամբողջ Միացեալ Նահանգաց համար միօրինակ Օրէնքներ չիւնելու,

Դրամ հանելու, եւ իր ու օտար Դրամներու Արժէքը կանոնաւորելու, եւ Օրինաւոր Զաւիերն ու Կշիռները (The Standard of Weights and Measures) հաստատելու:

Միացեալ Նահանգաց Պարտաթուղթերն եւ ընթացիկ Դրամը կեղծողները պատժելու,

Նամականոսներ եւ Սուրհանդակի Ճամբաներ հաստատելու,

Գիտութեան եւ պիտանի Արուեստից յառաջդիմութեան զարկ տալու՝ Հեղինակներու եւ Հնարիչներու մասնաւոր Ժամանակի մը համար ասպանովելով բացարձակ Իրաւունքը իրենց Հեղինակութեանց եւ Գիտերուն:

Բարձրագոյն Դատարանին ստորադաս Ատեաններ կազմելու,

Սահմանելու եւ պատժելու ծովուն բացերը կատարուած Ծովահնդութիւնները (Piracies) և Տիրադրութիւնները (Felonies), ինչպէս նաեւ, պատժելու Աղղային Օրինաց դէմ դործուած Յանցանքները,

Պատերազմ յայտարարելու, Բաց Արտօնադրեր եւ Վնասուց Փոխարէնադրեր (Letters of Marque and Reprisal) տալու եւ Ծովու ու Յամաքի վրայ ձերբակալութեան մասին Կանոններ չիւնելու,

Բանակներ կազմելու եւ պահպանելու, բայց ատոր դործածութեան համար յատկացուած դրամը Երկու Տարուան Շրջանէն աւելի ըլլալու չէ,

Հողալու եւ պահպանելու Նաւատորմ մը,

Յամաքային եւ Ծովային Իշխանութիւնները կառավարող Կանոններ հաստատելու,

Միջոցներ հայթայթելու, Քաղաքապահ Զօրքը (Militia) ի դէն կոչելու համար՝ Միութեան Օրէնքները դործադրելու, Ապստամբութիւնները զսպելու եւ Արտաքին Արշաւանքներ ետ մղելու,

Միջոցներ հայթայթելու՝ Քաղաքապահ Զօրքը կազմակերպելու, ղրկելու եւ մարդելու, եւ կառավարելու այն Զօրամասը որ Միացեալ Նահանգաց Ծառայութեան մէջ կը դրուի, իսկ Նահանգներուն վերապահելով Քաղաքապահ Զօրքին Պաշտօնեաներուն Կարգումը եւ Խորհրդարանի կողմէ առաջադրուած կանոններուն համաձայն դայն մարդելու դործը,

Բացարձակ Օրէնսդրական Իշխանութիւն բանեցնելու բոլոր խնդիրներուն շուրջ, ինչ որ ալ ըլլան անոնք, որ կը պատահին այն շրջանակին մէջ (տասը քառ մղոնէն աւելի չըլլալու պայմանաւ) որ Նահանգներու ժողովէն եւ Միացեալ Նահանգաց Վեհաժողովին կողմէ կ'ընդունուի իբրեւ Աթոք Միացեալ Նահանգաց կառավարութեան, միւսնոյն իշխանութիւնը պիտի ունենայ նաեւ Նահանգային Օրէնսդրական Մարմիններու հաւանութեամբ՝ Ամրոցներ (Forts), Վառօդարաններ (Magazines), Զինարաններ (Arsenals), Նաւարաններ (Dock-yards) եւ ուրիշ պիտանի Շէնքերու կառուցման համար դնուած վայրերուն եւ շէնքերուն վրայ, եւ

Շինելու բոլոր այն Օրէնքները որոնք անհրաժեշտ եւ պատշաճ են դործադրելու համար վերոյիշեալ եւ միւս բոլոր իշխանութիւնները որոնք այս Սահմանադրութեամբ Միացեալ Նահանգաց Կառավարութեան կամ անոր ունէ մէկ ձիւղին, կամ Պաշտօնեային տրուած են:

Հատուած 9. Հաղար ութ հարիւր եւ ութ թուականէն առաջ Միացեալ Նահանգաց Խորհրդարանը պիտի չարդիւնէ հիմա դոյութիւն ունեցող Նահանգներէն ունէ մէկը որ յարմար կը դատէ իր ուղած անձերը ներմուծել կամ արտաքսել, բայց Խորհրդարանի կողմէ իւրաքանչիւր անձի վրայ Տուրք կամ

մաքս մը կրնայ դրուիլ պայմանաւ որ այդ տասը տուարէն աւելի չըլլայ:

Անձնակալութեան Հրամանագրի (The Writ of Habeas Corpus) Մենաշնորհը պիտի չդադրեցուի, բացի Ապստամբութեան կամ Արշաւանքի պարագայէն, երբ Հանրային Ապահովութիւնը այդ Մենաշնորհին ժամանակաւոր կերպով դադրեցումը կը պահանջէ:

Ոչ մէկ (Bill of Attainder*) եւ կամ Յետ Իրողութեան Օրէնք (ex post facto Law) պիտի անցուի:

Ոչ մէկ Դիւսահարկ (Capitation) կամ ուրիշ ուղղակի տուրք պիտի դրուի ի բաց առեալ Համարի կամ Թուահամարի Համեմատութեամբ որոշուած տուրքէն:


Ոչ մէկ Տուրք կամ Մաքս պիտի առնուի մէկ Նահանգէ միւս Նահանգ ներմուծուած ապրանքէ:

Ոչ մէկ Նահանգի Նաւահանգստին Եկամուտն ու Առեւտուրը Նախամեծար պիտի նկատուի միւս Նահանգի նաւահանգըստին Եկամուտէն եւ Առեւտուրէն. ոչ ալ Նահանգէ Նահանգ երթիւկող Նաւեր պարտաւորուած պիտի ըլլան մտնելու կամ չմտնելու ուրիշ նաւահանգիստ, եւ կամ Ուրիշի մը մէջ Մաքս վճարելու:

Միացեալ Նահանգաց Գանձէն Օրէնքով Յատկացուած դրամէն զատ ուրիշ դրամ պիտի չքաշուի. բոլոր հանրային Դրամներուն Մուտքին ու Ելքին կանոնաւոր Համարատուութիւնը եւ Հաշուետուութիւնը ժամանակ առ ժամանակ պիտի հրատարակուի:

Աղնուականութեան մը Տիրտոս պիտի չի շնորհուի Միացեալ Նահանգաց կողմէ. եւ ոչ մէկ Միացեալ Նահանգաց Գործօն Պաշտօնեայ՝ առանց Խորհրդարանի հաւանութեան՝ ունէ

*Պիլ ալ էքէյնտըր Դրուժանութեան (Թրիզմ) եւ Տիրտոսութեան (Յէլըմի) համար տրուած արդարադատական եւ օրէնսդրական վճիռ մըն է, որ դատապարտեալին արիւնը կ'աղականէր, անոր շարժուն ու անշարժ կալուածները կը դրաւէր, դայն ժառանգութենէ կը զրկէր, եւ անոր կը զլտնար դատարանի մէջ վիայելու եւ ո'ւնէ օրինական պաշտպանութիւն կամ իրաւունք վայելելու ազատ քաղաքացիի մը մենաշնորհ:



Նուէր, Վարձք, Պաշտօն կամ Տիրույս պիտի ստանայ ո'եւէ թաղաւորէ, Իշխանէ կամ օտար Պետութեանէ :

Հատուած 10. Ոչ մէկ Նահանգ առանձինն Դաշնագրութիւն պիտի կնքէ, Զինակցի կամ Նիզակակցի Լէքթըրդ ալ Մարք էմտ Ռիքրայզը շնորհէ, Դրամ կտրէ, Վարկատմաներ (Bills of Credit) շրջաբերութեան մէջ դնէ. Արծաթ եւ Ոսկի Դրամէն տարբեր բան մը Պարտքերու Հատուցման համար դործածէ. պիլ ալ էքէյնտըր, էֆս բօւք ֆէֆթօ օրէնք, կամ պայմանագրութեանց պարտաւորութիւնը խաթարող օրէնք անցընէ, կամ Ալնուականութեան ո'եւէ Տիրույս շնորհէ :

Ո'չ մէկ Նահանգ՝ առանց Խորհրդարանի հաւանութեան՝ պիտի Հարկ կամ Մաքս դնէ Արտածութեանց եւ Ներածութեանց վրայ, բացի այն գումարէն որ անհրաժեշտ է իր հըսկողութեան Օրէնքներու գործադրութեանը համար. եւ Նահանգի մը կողմէ Արտածութեանց եւ Ներածութեանց վրայ դրուած բոլոր Հարկերուն եւ Մաքսերուն զուտ Արդիւնքը Միացեալ Նահանգաց Գանձին գործածութեան համար պիտի յատկացուի, եւ բոլոր այս կարգի Օրէնքներ Խորհրդարանի Վերաքննութեան ու անոր Վերին Հսկողութեան պիտի ենթարկուին :

Ո'չ մէկ Նահանգ՝ առանց Խորհրդարանի հաւանութեան՝ Կշիռի Մաքս պիտի դնէ, Խաղաղութեան ատեն Զօրք, կամ Պատերազմական Նաւեր պահէ, ուրիշ Նահանգի մը կամ օտար Պետութեան մը հետ Դաշնագրութիւն կամ Պայմանագրութիւն (Compact, Agreement) կնքէ, կամ Պատերազմի մէջ մտնէ, ի բաց առեալ այն պարագայէն՝ երբ իրականապէս իր հողը կ'արշաւուի, կամ այնպիսի վերահաս Վտանգի մը պահուն՝ երբ այսպիսի քայլի մը յետաձգումը անկարելի կը դառնայ :

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Հատուած 1. Գործադիր Իշխանութիւնը պիտի տրուի Միացեալ Նահանգաց Նախագահին : Ան Զորս Տարի պիտի Պաշտօնավարէ, եւ Փոխ-Նախագահին հետ մէկտեղ պիտի

ընտրուի չորս տարին անգամ մը : Անոնք պիտի ընտրուին հետեւեալ կերպով .

Իւրաքանչիւր Նահանգ Միացեալ Նահանգաց Խորհրդարանին մէջ ունեցած իր Ծերակուտականներու եւ Ներկայացուցիչներու ամբողջ թուոյն չափ եւ Նահանգային Օրէնսդրական Մարմնոյ հարկ տեսած կերպով Ընտրողներ պիտի կարդէ. բայց ո'չ մէկ Ծերակուտական, կամ Ներկայացուցիչ, եւ կամ Միացեալ Նահանգաց Պաշտօնեայ կրնայ Ընտրող կարգուիլ :

*[«Ընտրողները իրենց պատկանեալ Նահանգին մէջ պիտի հաւաքուին եւ Գաղտնի Քուէարկութեամբ ընտրեն երկու Անձեր, որոնցմէ առնուաղն մէկը իրենց հետ մէկտեղ միեւնոյն Նահանգի բնակիչներէն մին պիտի չըլլայ : Քուէարկողներու անուանացանկ մը պիտի պատրաստեն եւ իւրաքանչիւր անձի ստացած քուէաթուով մէկտեղ՝ զայն ստորագրելէ եւ կնքելէ յետոյ՝ կառավարութեան Աթոռը ուղղակի Ծերակոյտի Նախագահին ղրկեն : Ծերակոյտի Նախագահը՝ ի ներկայութեան Ծերակոյտին եւ Ներկայացուցչական Տան՝ բոլոր Յանձնարարականները պիտի բանայ եւ այն ատեն միայն Քուէները պիտի համրուին : Ամէնէն Շատ Քուէ ստացողը Նախագահ պիտի ըլլայ, պայմանաւ որ այսպիսի թիւ մը որոշուած Ընտրողներու (Electors) ամբողջական Թուոյն Մեծամասնութիւնը կադմէ. եւ եթէ պատահի որ երկու անձեր հաւասար քուէ չահին եւ երկուքին ալ քուէները որոշուած Ընտրողներու ամբողջական թուոյն Մեծամասնութիւնը կադմեն, այդ պարագային, Ներկայացուցչական Տունը, անմիջապէս, այդ երկու անձերէն մին զաղտնի քուէով պիտի ընտրէ Նախագահ. այնպէս պատահի որ երկու անձերէ եւ ո'չ մին մեծամասնութիւնը չահի՝ այն ատեն Ներկայացուցչական Տունը Անուանացանկին հինգ բարձրագոյններէն մին միեւնոյն կերպով կ'ընտրէ Նախագահ. բայց, Նախագահին ընտրութիւնը Նահանգային քուէարկութեամբ

* (Այս պարբերութիւնը տասնեակերորդ բարեփոխումը փոխուած է, (էջ 48) :

պիտի կատարուի, իւրաքանչիւր Նահանգի Ներկայացուցիչ մէկական քուէ ունենալով. այս նպատակին համար պահանջուած ժողովին մեծամասնութիւնը (quorum) Նահանգներու երկու-երրորդին Անդամի կամ Անդամոց մեծամասնութենէն պիտի բաղկանայ, եւ այսպիսի ընտրութեան մը պահուն բոլոր Նահանգներու մեծամասնութիւնը անհրաժեշտ է: Նախագահին ընտրութենէն յետոյ, իւրաքանչիւր պարագային, այն Անձը որ Ընտրողներու ամէնէն շատ Բուէն կ'ստանայ պիտի ընտրուի Փոխ-Նախագահ Միացեալ Նահանգաց: Իսկ եթէ պատահի որ երկու կամ աւելի անձեր հաւասար քուէ ստանան, այդ պարագային Ծերակոյտը անոնցմէ մէկը Գաղտնի Բուէ-արկութեամբ պիտի ընտրէ Փոխ-Նախագահ:]

Միացեալ Նահանգաց Խորհրդարանը կրնայ որոշել Ընտրողներու ընտրութեան ժամանակը եւ անոնց քուէատուութեան Օրը, եւ այս Օրը միաժամանակ պիտի ըլլայ ամբողջ Միացեալ Նահանգաց մէջ:

Հոս ծնած քաղաքացիէն, կամ այս Սահմանադրութեան որդեգրման ժամանակ Միացեալ Նահանգաց քաղաքացի եղողէն զատ ո'չ մէկը՝ եւ ո'չ ալ այն անձը որ Երեսուն եւ Հինգ Տարեկանէն վար է, եւ Տասնեւչորս Տարի Միացեալ Նահանգաց մէջ բնակած չէ՝ պիտի Միացեալ Նահանգաց Նախագահական պաշտօնին ընտրելի ըլլայ:

Նախագահին Պաշտօնէ Հեռացումին, Մահուան, Հրաժարումին, կամ իր պաշտօնին իշխանութիւնն ու պարտականութիւնները կատարելու Անկարողութեան պարագային, անոր պաշտօնը պիտի փոխանցուի Փոխ-Նախագահին, եւ Նախագահին ու Փոխ-Նախագահին՝ երկուքին ալ՝ միեւնոյն դրութեան ենթարկուելու պարագային Խորհրդարանը կրնայ օրէնքով որոշել թէ ո՞ր մէկ պաշտօնէն կրնայ Նախագահին դերը ըստանձնել, եւ ընտրեալ պաշտօնէն պիտի պաշտօնավարէ մինչեւ որ այսպիսի Անկարողութիւն մը օրինապէս դարմանուի, կամ Նախագահ մը ընտրուի:

Նախագահը իր Ծառայութեան համար Որոշեալ Ժամանակներ Հատուցում պիտի ստանայ, որ պիտի չաւելցուի կամ

պակսեցուի իր պաշտօնավարութեան Ծրջանին, եւ միեւնոյն շրջանին մէջ ան Միացեալ Նահանգներէն եւ կամ ո'եւէ մէկ Նահանգէ իր թոշակէն զատ ուրիշ Վարձատրութիւն պիտի չստանայ:

Նախագահական Պաշտօնի Ձեռնարկէ առաջ ան հետեւեալ Յայտարարութեան Երդումը պիտի առնէ. «Համդիսաւորապէս կ'երդմում (կամ կը յայտարարեմ) որ ես Միացեալ Նահանգաց Նախագահի պաշտօնը հաւատարմօրէն պիտի վարեմ, եւ Կարողութեամբ լաւագոյն չափով պահեմ, պահպանեմ եւ պաշտպանեմ Միացեալ Նահանգաց Սահմանադրութիւնը»:

Հատուած 2. Նախագահը Միացեալ Նահանգաց Բանակին եւ Նաւատորմին, ինչպէս նաեւ, բոլոր Նահանգներու Քաղաքապահ Զօրքին Միացեալ Նահանգաց դործօն Ծառայութեան կոչուած ատեն անոնց Ընդհանուր Հրամանատարը պիտի ըլլայ. Ան կրնայ իւրաքանչիւր Գործադիր Բաժնի գլխաւոր Պաշտօնէակին զբաւոր Գաղափարը պահանջել ունի իր վարած շուրջ որ առնչութիւն կամ կապակցութիւն ունի իր վարած պաշտօնին հետ, եւ ան Միացեալ Նահանգաց դէմ գործուած ոճիրի մը համար Մահապատիժի Յետաձգումներ (Reprieves) եւ Ներումներ (Pardons) չնորհելու Իշխանութիւն պիտի ունենայ, ի բաց առեալ Ամբաստանութեան (Impeachment) պարզաներուն:

Նախագահը իշխանութիւն պիտի ունենայ՝ Ծերակոյտի խորհուրդին եւ հաւանութեան հետ եւ անով՝ Դաշինքներ կընքելու, պայմանաւ որ ներկայ եղող Ծերակոտականներու երկու-երրորդը համամիտ ըլլան, եւ Նախագահը նախ ինք պիտի անուանէ եւ ապա՝ Ծերակոյտի խորհուրդին եւ հաւանութեան հետ եւ անով՝ հաստատէ Դեսպաններ, ուրիշ Հանրային Նախարարներ եւ Հիւպատոսներ, Բարձրագոյն Դատարանի Դատաւորներ եւ Միացեալ Նահանգաց այն բոլոր Պաշտօնէաները, որոնք թէեւ հոս յիշուած չեն, սակայն, ապագային կրնան Օրէնքով հաստատուիլ. բայց եւ այնպէս, Խորհրդարանը կըրնայ, իր յարմար դատած կերպով, կառավարական ստորադաս պաշտօնէաներու ընտրութիւնը կամ միայն Նախագահին,

կա՛մ Դատարաններուն եւ կա՛մ Կառավարական Բաժիններու Պետերուն թողուլ:

Նախագահը իշխանութիւն պիտի ունենայ լեցնելու Ծերա-կոյտի այն թափուր աթոռները, որոնք կը պատահին Ծերա-կոյտի նիստի դադարի շրջանին, ուրիշներու պաշտօն շնորհ-ւով, որոնց պաշտօնավարութիւնը կը վերջանայ Ծերակոյտի յաջորդ նիստի փակումին:

Հատուած 3. Նախագահը, ժամանակ առ ժամանակ, Միացեալ Նահանգաց ընդհանուր կացութեան վրայ տեղեկու-թիւն պիտի տայ Ծերակոյտին, եւ անոր Նկատառութեան յանձնարարէ այնպիսի Բայլեր զորս ինք պարտ ու պատ-շաճ կը համարէ. ան կրնայ, բացառիկ Պարագաններու տակ, Խորհրդարանի երկու Տուններէն մին կամ միւսը եւ կամ եր-կուքն ալ ժողովի կանչել, եւ ժողովի Յետաձգումին համար Խորհրդարանի երկու Տուններուն միջեւ ծագած Անհամաձայ-նութեան Պահուն, Նախագահը կրնայ մինչեւ իր յարմար դա-տած ժամանակը Յետաձգել զանոնք. ան պաշտօնապէս պիտի ընդունի Դեսպաններն ու Հանրային Նախարարները. ան պիտի Հսկէ որ Օրէնքները հաւատարմօրէն դործադրուին, եւ Միաց-եալ Նահանգաց բոլոր Պաշտօնեաններուն ինք Պաշտօն պիտի Յանձնէ:

Հատուած 4. Միացեալ Նահանգաց Նախագահը, Փոխ-Նախագահը եւ բոլոր քաղաքային Պաշտօնեանները՝ երբ Դա-ւաճանութեամբ, Կաշտակերութեամբ կամ ուրիշ մեծ Ոճիր-ներով ու Յանցանքներով կ'ամբաստանուին եւ կը դատաւար-տուին՝ պաշտօնազուրկ պիտի ըլլան:

ՅՈՂՈՒԱԾ Գ.

Հատուած 1. Միացեալ Նահանգաց Դատական Իշխանու-թիւնը պիտի կայանայ Բարձրագոյն Դատարանին եւ այնպիսի ստորագու Դատարաններու մէջ, զոր Խորհրդարանը ժամա-նակ առ ժամանակ կ'արտօնէ եւ կը հաստատէ: Թէ՛ Բարձրա-գոյն Դատարանի եւ թէ՛ ստորագու դատարաններու Դատա-ւորները իրենց պաշտօնը պիտի սկսեն՝ քանի Առաքինի Վար-

քով կը պաշտօնավարեն, եւ որոշեալ ժամանակին Վճարու՛մ պիտի ստանան իրենց Ծառայութեան համար. որ իրենց պաշ-տօնավարութեան ժամանակամիջոցին պիտի չի նուազեցուի:

Հատուած 2. Դատական Իշխանութիւնը պիտի իշխէ այս Սահմանադրութեան տակ եւ Օրէնքի ու Արդարադատու-թեան մէջ եղող բոլոր դատերուն, Միացեալ Նահանգաց բո-լոր Օրէնքներուն, եւ անոր հեղինակութեան տակ կնքուած եւ կնքուելիք Դաշնադրութիւններուն ու բոլոր այն խնդիրներուն՝ որոնք կապակցութիւն ունին Դեսպաններու, Նախարարներու եւ Հիւպատոսներու հետ. — բոլոր այն խնդիրներուն՝ որոնք առնչութիւն ունին Ծովային Վարչութեան եւ Ծովային Իրա-ւասութեանց հետ. — այն բոլոր Վէճերուն որոնց Միացեալ Նահանգներ մասնակից կ'ըլլան. — երկու կամ աւելի Նահանգ-ներու միջեւ՝ Նահանգի մը եւ ուրիշ Նահանգի մը միջեւ՝ տարբեր Նահանգներու Բաղաժապիտներուն միջեւ, միեւնոյն Նահանգի Բաղաժապիտներուն միջեւ, որոնք ուրիշ Նահանգնե-րու Արտօնադրութեան ներքեւ հողեր կը պահանջեն՝ եւ Նա-հանգի մը կամ իր Բաղաժապիտներուն միջեւ եւ օտար Պետու-թիւններու կամ անոնց Բաղաժապիտներուն կամ Հայտակնե-րուն միջեւ ծագած վէճերուն վրայ:

Բոլոր այն Խնդիրներուն վրայ որոնք կ'ադրեն Դեսպան-ները, ուրիշ Հանրային Նախարարները, Հիւպատոսները եւ այն բոլոր խնդիրներուն վրայ որոնց Նահանգ մը մասնակից կ'ըլ-լայ, Միացեալ Նահանգաց Բարձրագոյն Դատարանը հիմնա-կան իրաւասութիւն պիտի ունենայ: Վերոյիշեալ միւս բոլոր խնդիրներուն՝ թէ՛ օրէնքի եւ թէ՛ իրողութեան մէջ (both as to Law and Fact) Բարձրագոյն Դատարանը ստորագու ատ-եանի մը վճիռները քննելու իշխանութիւնը պիտի ունենայ (appellate Jurisdiction) եւ այնպիսի Բացառութիւններու եւ Կարգադրութիւններու ներքեւ զորս Խորհրդարանը կը շինէ:

Ամբաստանութեան դատերէն զատ՝ բոլոր Ոճրադործու-թեանց դատավարութիւնը միւրի-ով պիտի ըլլայ եւ ոճրադոր-ծութեան մը դատավարութիւնը Ոճիրին տեղի ունեցած Նա-հանգին մէջ պիտի կատարուի, բայց երբ կատարուած Ոճրա-

գործութիւն մը եւ ոչ մէկ Նահանգի մէջ տեղի ունեցած է, այն ատեն անոր դատաւարութիւնը տեղի կ'ունենայ այնտեղ ուր Միացեալ Նահանգաց Խորհրդարանը Օրէնքով կ'որոշէ:

Հատուած 3. Միացեալ Նահանգաց դէմ զէնք բարձրացնելը, կամ անոր թշնամիներուն յարիւր, կամ անոնց թեւ ու թիկունք ըլլալը (to give aid and comfort) Միացեալ Նահանգաց դէմ գործուած քրէական յանցանք պիտի նկատուի: Ոչ մէկը Դաւաճանութեամբ պիտի դատաւարուուի, ի բաց առեալ այն պարագայէն երբ ամբաստանեալը Դռնաց դատարանի մը մէջ անձնապէս կը խոստովանի իր յանցանքը, եւ կամ անոր բացէ ի բաց գործած յայտնի արարքը երկու վիճակներու միջոցաւ կը փաստուի դռնաց Դատարանի մը մէջ:

Միացեալ Նահանգաց Խորհրդարանը Դաւաճանութեան մը Պատիժը յայտարարելու իշխանութիւնը պիտի ունենայ. բայց դաւաճանութեան համար տրուած ո'չ մէկ պատիժ Դատաւարտեալին արիւնը պիտի ապականէ, կամ անոր անհատական սեփականութիւնները գրաւէ, ի բաց առեալ Դատաւարտեալին Կեանքի տեւողութեանը Շրջանին:

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Հատուած 1. Իւրաքանչիւր Նահանգի մէջ կատարեալ Հաւատք եւ Վստահութիւն պիտի ընծայուի բոլոր միւս Նահանգներու ունեցած Օրէնքներուն, Արձանադրութիւններուն եւ Օրինաւոր Դատաւարութեանց: Քօնկիւնք կրնայ, ընդհանուր օրէնքներու կիրարկութեամբ, որոշել Կերպն ու Աղդեցութիւնը, որով այսպիսի Օրէնքներ, արձանադրութիւններ եւ դատաւարութիւններ կրնան փաստուիլ:

Հատուած 2. Իւրաքանչիւր Նահանգի Քաղաքացիները միւս Նահանգներու Քաղաքացիներուն Առանձնաշնորհումներն (Privileges) եւ Ապահարկութիւնները (Immunities) պիտի վայելեն:

Եթէ՝ ոեւէ Նահանգէ Դրուժանութեամբ (Treason) Տի-

րադրութեամբ (Felony), կամ ուրիշ Ոճիրով ամբաստանեալ մը երբ Արդարութենէն խուսափելով ուրիշ Նահանգ մը կ'ապաստանի՝ անոր խուսափած քաղաքին Գործադիր Իշխանութեան պահանջին վրայ՝ պիտի յանձնուի պատկանեալ իշխանութեան փոխադրուելու համար այն Նահանգը, որ գործուած ոճիրին վրայ Իրաւասութիւն ունի:

Ո'չ մէկ անձ, որ Նահանգի մը մէջ եւ անոր օրէնքներուն տրամադրութեան համաձայն Ծառայութեան կամ Աշխատանքի դրուած է կրնայ ուրիշ Նահանգ մը խուսափելով՝ եւ այդ Նահանգի իրեն համար նպաստաւոր օրինաց տրամադրութեան հետեւանքով՝ իր Ծառայութենէն կամ Աշխատանքէն ազատ արձակուիլ, այլ ան պիտի յանձնուի այն պատկանեալ անձին, որուն կը պարտի իր Ծառայութիւնն կամ Աշխատանքը:

Հատուած 3. Խորհրդարանի կողմէ նոր Նահանգներ կըրնան ընդունուիլ այս Միութեան մէջ, բայց ո'չ մէկ նոր Նահանգ կրնայ կազմուիլ՝ կամ հաստատուիլ ուրիշ ոեւէ Նահանգի իշխանութեան Սահմանին մէջ, եւ ոչ ալ երկու կամ երեք Նահանգներու եւ կամ անոնց մասերուն կցումով նոր Նահանգ մը կրնայ կազմուիլ, առանց այդ Նահանգներուն պատկանեալ Օրէնսդրական Մարմիններու եւ Միացեալ Նահանգներու Խորհրդարանի հաւանութեան:

Միացեալ Նահանգաց Խորհրդարանը իշխանութիւն պիտի ունենայ Աղդապատկան Հոգերը եւ ուրիշ Սեփականութիւնները փոխանցելու եւ անոնց կառավարութեանը համար պէտք եղած կարգն ու կանոնը շինելու, եւ այս Սահմանադրութեան մէջ ո'չ մէկ բան պիտի մեկնուի ի վնաս կամ ի նախապաշարումն Միացեալ Նահանգաց կամ ոեւէ մէկ Նահանգի Շահերուն:

Հատուած 4. Միացեալ Նահանգները Միութեան իւրաքանչիւր Նահանգին Հանրապետական Կառավարութիւն մը պիտի ապահովէ, զանոնք օտար Արջաւանքի դէմ պաշտպանէ եւ Նահանգային Օրէնսդրական Մարմնոյ կամ Գործադիր Իշխանութեան գլխումին վրայ (երբ Նահանգային Օրէնսդրական

Մարմինը չի կրնար դամարուել ներքին Ռոնութեանց դէմ նաեւ պիտի պաշտպանէ զանոնք:

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Որհրդարանը՝ երբ իր երկու Տուներու մեծամասնութիւնը անհրաժեշտ տեսնէ՝ կրնայ այս Սահմանադրութեան Բարեփոխումներ առաջարկել, եւ կամ, տարբեր Նահանգներու Օրէնսդրական Մարմիններու երկու-երրորդին դիմումին վրայ՝ Պատգամաւորական ժողով մը պիտի կազմէ Բարեփոխումներու առաջարկութեան համար, որ իւրաքանչիւր պարագային, հաւասարապէս, վաւերական պիտի համարուի եւ այս Սահմանադրութեան մէկ մասը նկատուի, պայմանաւ որ անոնք վաւերացուին Միացեալ Նահանգաց Օրէնսդրական Մարմնոյ երեք-չորրորդին՝ կամ Միացեալ Նահանգաց Պատգամաւորական ժողովին երեք-չորրորդին՝ եւ կամ վաւերացուին այս երկու Կերպերէն միոյն կամ միւսին կողմէ, ո՛ր մէկ կերպը որ կ'առաջադրուի Որհրդարանին կողմէ, պայմանաւ որ հազար ութ հարիւր եւ ութ թուականէն առաջ անցուած ո՛չ մէկ Սահմ. բարեփոխում Ո՛րէն Կերպով պիտի ազդէ Սահմանադրութեան առաջին Յօդուածին իններորդ Հատուածին Առաջին եւ Զորրորդ Պարբերութիւններուն վրայ. եւ թէ, ոչ մէկ Նահանգ առանց իր հաւանութեան, Ծերակոյտին մէջ իր հասար քուէի իրաւունքէն պիտի զրկուի:

ՅՕԴՈՒԱԾ 2.

Սահմանադրութեան որդեգրումէն առաջ բոլոր կնքուած Պարտքերը եւ Յանձնառութիւնները՝ Սահմանադրութեան ներքեւ՝ Միացեալ Նահանգաց համար այնքան վաւերական պիտի ըլլան որքան որ անոնք վաւերական պիտի ըլլային Դաշնակցային Կառավարութեան ներքեւ:

Այս Սահմանադրութիւնը եւ անոր Տրամադրութեան համաձայն ըլլալիք Օրէնքները, և անոր հեղինակութեան ներքեւ կնքուած և կնքուելիք բոլոր Դաշնադրութիւնները, պիտի ճան-

չըցուին երկրին իբրեւ Գերագոյն Օրէնքը, եւ բոլոր Նահանգներու Դատաւորները եւ անոնց Սահմանադրութեանց ու օրէնքներուն մէջ կողո՞ղ ո՛րեւէ տրամադրութիւն՝ չնայած թէ Հակասական՝ անպայման ենթակայ պիտի ըլլան Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան:

Վերոյիշեալ Ծերակոյտականներն ու Ներկայացուցիչները, բոլոր Նահանգներու Օրէնսդրական Մարմնոյ Անդամները, ինչպէս նաեւ թէ՛ Միացեալ Նահանգաց եւ թէ՛ տարբեր Նահանգներու Գործադիր եւ Դատական Պաշտօնեաները երդումով պիտի խոստանան պահել ու պաշտպանել Միացեալ Նահանգաց Սահմանադրութիւնը. բայց Նահանգաց պաշտօնի ընտրուող կամ ընտրուելիք ո՛չ մէկ անձ՝ իբրեւ պաշտօնի լրացուցիչ պայման՝ Հաւատաքննութեան պիտի ենթարկուի:

ՅՕԴՈՒԱԾ Է.

Ինչ Նահանգներու Համադրումարին կողմէ այս Սահմանադրութեան վաւերացումը բաւարար պիտի նկատուի յետոյ զայն նմանապէս վաւերացնող Նահանգներու միջեւ հաստատմանը համար:

Վաւերացուած՝ յԱմբ Տիառն Սեպտ.ի Տասնեւեօթներորդ Օրը, հաղար եօթն հարիւր ութսուն եւ եօթին, եւ Միացեալ Նահանգաց Ազատութեան Տասն եւ Երկրորդ Տարեդարձին՝ ներկայ կողո՞ղ Նահանգներու Համադրումարին միաբան հաւանութեամբ:

Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան Յաւելուածական եւ Բարեփոխեալ Յօդուածները, Յառաջադրուած Խորհրդարանի՝ եւ Վաւերացուած Զանազան Նահանգներու Օրէնսդրական Մարմիններու կողմէ, Բուն Սահմանադրութեան Հինգերորդ Յօդուածին Տրամադրութեան Համաձայն:

ՅՕԴՈՒԱԾ Ա.

Միացեալ Նահանգաց Որհրդարանը՝ կրօնքի մը հաստատման կամ անոր ազատ կիրարկման վերաբերեալ, կամ

խօսքի կամ մամուլի աղաթութիւնը արդիւոյ, կամ ժողովուրդին խաղաղութեամբ հաւաքուելու իրաւունքը, կամ դործուած չարիքները դարմանելու համար Կառավարութեան խնդրադիր մատուցանելու ժողովուրդին իրաւունքը խափանող ո՛չ մէկ օրէնք պիտի չինէ :

ՅՕԴՈՒԱԾ Բ.

Լաւ կաղմակերպուած Քաղաքապահ Ջօրախումբ մը, որ անհրաժեշտ է ազատ Նահանգի մը ապահովութեան համար, ժողովուրդին Ձէնք պահելու եւ կրելու իրաւունքը պիտի չի դրժուի :

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Ո՛չ խաղաղութեան եւ ո՛չ ալ սպտերաղմի ատեն՝ առանց Տիրոջ հաւանութեան՝ ոչ մէկ զինուոր բնակութիւն պիտի հաստատէ ո՛րեւէ տան մէջ, բացի օրէնքին առաջադրելիք կերպէն :

ՅՕԴՈՒԱԾ Դ.

Իրենց անձին, տանը, սեպհականութիւններուն եւ ինչքերուն ապօրէն կամ անպատշաճ խուզարկումներու եւ բռնադրաւումներու դէմ ժողովուրդին ունեցած ապահովութեան իրաւունքը պիտի չբռնադատուի, եւ ո՛չ ալ՝ առանց Ներդու մով հաստատուած հաւանական պատճառի եւ մասնաւորապէս նկարագրելու խուզարկուելիք տեղը եւ ձեռնարկուելիք անձն ու ինչքը՝ ոչ մէկ Հրովարտակ (Warrant) պիտի հանուի :

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Ո՛չ մէկ անձ մահացու (capital) կամ ուրիշ վատահամբաւ ոճիրի համար պատասխանատու պիտի նկատուի առանց ի ներկայացման եւ ի դատավարութեան Աւագ Ներդուեալ Դատաւորաց ժողովին (Grand Jury), ի բաց առեալ այն խնդիրներէն որ ծովային կամ ցամաքային, կամ Քաղաքապահ Ջօր-

քին մէջ ծագում կ'առնեն եւ որոնք դործնականապէս երկրին ծառայութեան մէջ են Պատերազմի կամ հանրային վտանգի մը ատեն. ո՛չ մէկուն կեանքն ու անդամը նոյն յանցանքին համար պիտի երկու անգամ վտանգի դրուի (twice put in jeopardy). ո՛չ մէկ Ոճրադործական Դատի մէջ ամբաստանեալ ինքն իրեն դէմ պիտի վկայէ, ո՛չ ալ պիտի զրկուի կեանքէ, ապատութենէ, կամ սեպհականութենէ՝ առանց օրինաւոր դատավարութեան (without due process of Law), եւ ո՛չ ալ ունէ անհատական սեպհականութիւն հասարակաց դործածութեան համար պիտի իւրացուի առանց արդար եւ օրինաւոր վարձատրութեան :

ՅՕԴՈՒԱԾ Զ.

Բոլոր եղեռնական դատավարութեանց մէջ, ամբաստանեալը արագ եւ հրապարակային դատավարութեան իրաւունքը պիտի վայելէ, ի ներկայութեան ոճիրը դործուած Նահանգէն եւ վիճակէն ընտրուած անկողմնակալ Ներդուեալ Դատաւորներու Խումբին (Jury), պայմանաւ որ վիճակը կանխաւ օրինօք ստուգուած ըլլայ, եւ ան տեղեկանայ ամբաստանութեան պատճառին ու բնոյթին. ան իրաւունքը վայելէ դէմ առ դէմ դալու ամբաստանիչ վկաներուն հետ. ստիպողական դրութեամբ իրեն ի նպաստ վկաներ ունենալու, եւ իր պաշտպանութեան համար փաստաբանի մը աջակցութիւնը վայելելու :

ՅՕԴՈՒԱԾ Է.

Հասարակ օրէնքի (common law) տակ եկող դատավարութեանց մէջ՝ երբ հակաճառութեան նիւթ եղող արժէքը քրտան տոլարէն վեր է, միւրիով դատ տեսնելու իրաւունքը պիտի պահպանուի, եւ ոչ մէկ արարք որ միւրի-ով դատուած է՝ քաւմը-10-ի օրէնքի տրամադրութենէն դատ՝ Միացեալ Նահանգաց ոչ մէկ Դատարանին մէջ պիտի վերաքննուի :

ՅՕԴՈՒԱԾ Ը.

Ո՛չ չափազանց երաշխաւորութիւն (bail) պիտի պահան-

ջուրի, ո՛չ չափազանց տուգանք դրուի եւ ո՛չ ալ անդուծ եւ արտասովոր պատիժներ սահմանուին:

ՅՕԴՈՒԱԾ Թ.

Սահմանադրութեան մէջ որոշ իրաւունքներու թուումը ժողովուրդին ունեցած միւս իրաւունքներուն իրրեւ դրժում մը կամ արժէքի նուազեցում մը պիտի չնկատուի:

ՅՕԴՈՒԱԾ Ժ.

Այն բոլոր իշխանութիւնները որոնք Սահմանադրութեամբ չեն տրուած Միաց. Նահանգաց եւ ո՛չ ալ արդիւրուած են Նահանգներու, կը վերապահուին Նահանգներուն եւ ժողովուրդին, փոխադարձաբար:

ՅՕԴՈՒԱԾ ԺԱ.

Միացեալ Նահանգաց Դատական իշխանութիւնը այնպէս պիտի չի մեկնուի որ ան տարբեր Նահանգի մը Քաղաքացիներուն, կամ ուրիշ օտար Տէրութեան մը Քաղաքացիներուն կամ Հպատակներուն կողմէ Միացեալ Նահանգներէ մէկուն դէմ սկսուած կամ հետապնդուած արդարութեան կամ օրէնքի ուրիշ դատ ընդգրկէ:

ՅՕԴՈՒԱԾ ԺԲ.

Ընտրողները իրենց փոխադարձ Նահանգներուն մէջ պիտի հաւաքուին եւ դադարի քուէարկութեամբ ընտրեն Նախագահ մը եւ Փոխ-Նախագահ մը որոնցմէ՝ գոնէ մին՝ իրենց հետ մէկտեղ միեւնոյն Նահանգին բնակիչը պիտի չըլլայ: Անոնք իրենց դադարի քուէարկութեան մէջ պիտի անուանեն իրրեւ Նախագահ ընտրուած անձը, եւ դատ ու դադարի քուէարկութեամբ անուանեն իրրեւ Փոխ-Նախագահ ընտրուած անձը, եւ Նախագահութեան ու Փոխ-Նախագահութեան համար քուէարկուած բոլոր անձերուն դատ ցանկերը չինեն, եւ իւրաքանչիւր

րին տրուած բոլոր քուէներուն ցանկը պատրաստեն, եւ դանոնք ստորագրելէ ու կնքելէ յետոյ զրկեն Միացեալ Նահանգաց կառավարութեան կեդրոնը, ուղղակի Ծերակոյտի Նախագահին, որ ի ներկայութեան Ծերակոյտի եւ Ներկայացուցչական Տան բոլոր վկայադրերը պիտի բանայ եւ այն ատեն քուէները պիտի համրուին: Նախագահութեան համար ամէնէն չատ քուէ ստացողը պիտի ըլլայ Նախագահը, պայմանաւ որ այս թիւը կարողուած Ընտրողներուն թուոյն մեծամասնութիւնը կազմէ. եւ եթէ պատահի որ ոչ մէկ անձ քուէի այս մեծամասնութիւնը ստանայ, այն ատեն Ներկայացուցչական Տունը՝ դադարի քուէարկութեամբ՝ Նախագահութեան համար քուէարկուած անձերէն երեք ամէնէն չատ քուէ ստացողներէն Նախագահ մը պիտի ընտրէ: Նախագահին ընտրութիւնը, սակայն, նահանգային քուէարկութեամբ պիտի կատարուի, իւրաքանչիւր Նահանգ մէկ քուէ ունենալու պայմանաւ. այս նպատակին համար դումարուած ժողովին օրինական թիւը (quorum) Նահանգներու երկու-երրորդին անդամներէն պիտի բաղկանայ, եւ ընտրութեան համար ալ բոլոր Նահանգներու մեծամասնութիւնը անհրաժեշտ պիտի ըլլայ: Եւ եթէ Ներկայացուցչական Տունը, երբ Նախագահական ընտրութեան իրաւունքը իրեն կը փոխանցուի եւ ինք մինչեւ յառաջիկայ Մարտ չորսին Նախագահ մը չնտրեր, այն ատեն Փոխ-Նախագահը Նախագահին դերը պիտի կատարէ այնպէս ինչպէս որ ան Նախագահին մահուան կամ ուրիշ կազմային անկարողութեան պարագային անոր դերը պիտի կատարէր: Փոխ-Նախագահութեան համար ամէնէն չատ քուէ ստացողը պիտի ըլլայ Միացեալ Նահանգաց Փոխ-Նախագահը, պայմանաւ որ այս թիւը կարողուած Ընտրողներու մեծամասնութիւնը կազմէ, եւ եթէ ուրիշ մէկը մեծամասնութիւն չստանայ, այն ատեն Ծերակոյտը ցուցակին վրայէն երկու ամէնէն չատ քուէ ստացողներէն մէկը պիտի ընտրէ իրրեւ Միացեալ Նահանգաց Փոխ-Նախագահը. այս նպատակին համար դումարուած ժողովին օրինական թիւը (quorum) բոլոր Ծերակուտականներու երկու-երրորդէն պիտի բաղկանայ,

եւ ընտրութեան համար ամբողջական թուոյն մեծամասնութիւնը անհրաժեշտ պիտի ըլլայ: Բայց ո՛չ մէկ անձ, որ սահմանադրականօրէն Նախագահութեան պաշտօնին անընտրելի է, Միացեալ Նահանգաց Փոխ-Նախագահութեան պաշտօնին ընտրելի պիտի ըլլայ:

ՅՕԴՈՒԱԾ ԺԳ.

Հատուած 1. Ո՛չ գերութիւն եւ ո՛չ ալ ակամայ ծառայութիւն՝ ի բաց առեալ գործուած ոճիրի մը համար տրուած պատժոյ պարագային որուն համար ոճրագործը ըստ օրինի դատաւարտուած է՝ Միացեալ Նահանգաց կամ անոր իշխանութեան ներքեւ գտնուող ոեւէ մէկ տեղ գոյութիւն պիտի ունենայ:

Հատուած 2. Միացեալ Նահանգաց Խորհրդարանը՝ պատշաճ օրէնսդրութեամբ՝ այս յօդուածը գործադրութեան դնելու համար իշխանութիւն պիտի ունենայ:

ՅՕԴՈՒԱԾ ԺԴ.

Հատուած 1. Ամէն անոնք՝ որոնք Միացեալ Նահանգաց մէջ ծնած կամ անոր քաղաքացի եղած են եւ անոր իշխանութեան ենթակայ են, Միացեալ Նահանգաց եւ իրենց բնակած Նահանգին քաղաքացիներն են: Ո՛չ մէկ Նահանգ Միացեալ Նահանգաց քաղաքացիներու իրաւունքներն ու ասպահարկութիւնները խախտող օրէնք պիտի անցնէ կամ բռնադատէ. ո՛չ մէկ Նահանգ՝ առանց օրինաւոր դատաւարութեան՝ ո՛րեւէ անձ կեանքէ, ազատութենէ կամ սեփականութենէ պիտի զրկէ, եւ ո՛չ ալ իր իշխանութեան ներքեւ գտնուող ո՛րեւէ անհատի օրէնքի հաւասար պաշտպանութիւնը զլանայ:

Հատուած 2. Ներկայացուցիչները, բոլոր Նահանգներու միջեւ, իրենց բնակչութեան փոխադարձ թուոյն համեմատ հաւասարապէս պիտի բաշխուին, սոյն թուոյն մէջ հաշուելով իւրաքանչիւր Նահանգի անձներուն ամբողջական թիւը, ի բաց

առեալ տուրքաւորի Ամերիկեան Հնդիկներէն: Բայց, երբ Նահանգի մը ոեւէ քսան եւ մէկ տարեկան արու բնակչին եւ Միացեալ Նահանգաց բնակիչներուն ո՛րեւէ ընտրութեան պահուն՝ Միացեալ Նահանգաց Նախագահ եւ Փոխ-Նախագահ ընտրողներու ընտրութեան, Խորհրդարանի Ներկայացուցիչներ, Նահանգային Գործադիր ու Դատական պաշտօնեաներ, կամ Նահանգային Օրէնսդրական Մարմնոյ անդամներ ընտրելու քուէարկութեան իրաւունքը մերժուած է, կամ, երբ աստամբութեան մասնակցութեան կամ ուրիշ ոճիրի մեղսակից ըլլալուն համար անոր քուէարկութեան իրաւունքը ոեւէ կերպով կրճատուած է, այն ատեն Նահանգին մէջ ներկայացուցչական հիմքը պիտի սեղմուի այն համեմատութեան՝ որ այսպիսի արու բնակչութեան եւ Նահանգին քսան եւ մէկ տարեկան ամբողջ արու բնակչութեան թուոյն միջեւ գոյութիւն ունի:

Հատուած 3. Ո՛չ մէկը պիտի Խորհրդարանի Ծերակուտական կամ Ներկայացուցիչ կամ Նախագահի եւ Փոխ-Նախագահի ընտրող ըլլայ կամ ոեւէ Նահանգի կամ Միացեալ Նահանգաց կառավարութեան մէջ ո՛րեւէ ղինուորական կամ քաղաքային պաշտօն ունենայ, որ՝ իբրեւ Միաց. Նահանգաց Խորհրդարանի անդամ, կամ, իբրեւ Միաց. Նահանգաց ղին. պաշտօնեայ, կամ ո՛րեւէ Նահանգի Օրէնսդրական Մարմնոյ իբրեւ անդամ, կամ ոեւէ Նահանգի իբրեւ Գործադիր եւ Դատական պաշտօնեայ՝ Միացեալ Նահանգաց Սահմանադրութիւնը պաշտպանելու համար կանխաւ երդում առնելէ յետոյ անոր (Միաց. Նահանգաց) դէմ ասպտամբութեան կամ ըմբոստութեան մէջ գտնուած է, եւ կամ ալ ու աջակցութիւն տուած է անոր թշնամիներուն: Այսուհանդերձ, Միաց. Նահանգաց Խորհրդարանը իր երկու Տուններուն իւրաքանչիւրին երկուերորդին քուէով կրնայ այսպիսի խախտանքաւոր արդելք մը անձի մը վրայէն վերցնել:

Հատուած 4. Օրէնքով վաւերացուած Ամերիկայի հանրային պարտքին՝ ընդգրկելով նաեւ ասպտամբութիւն մը կամ ըմբոստութիւն մը ճնշելու ատեն մղուած կռիւին մէջ ծառա-

յողներուն համար յատկացուած ռոճիկներու եւ պարգեւներու դումարները՝ վաւերականութիւնը պէտք չէ հարցի ենթարկուի: Բայց ո՛չ Միաց. Նահանգները եւ ո՛չ ալ ռեւէ մէկ Նահանգ Միաց. Նահանգաց դէմ եղած ապստամբութեան կամ ըմբոստութեան մէջ ռեւէ պարտք ու պարտականութիւն, կամ դերի մը կորուստին կամ փրկութեան համար եղած ռեւէ պահանջ պիտի յանձն առնէ կամ վճարէ: Բոլոր այսպիսի պարտքեր, պարտականութիւններ եւ պահանջներ ապօրէն եւ անվաւեր պիտի ճանչցուին:

Հատուած 5. Միաց. Նահանգաց Խորհրդարանը՝ պատշաճ օրէնսդրութեամբ՝ այս Յօդուածին տրամադրութիւնները հարկադրելու իշխանութիւնը պիտի ունենայ:

ՅՕԴՈՒԱԾ ԺԵ.

Հատուած 1. Միաց. Նահանգաց քաղաքացիներու քուէարկութեան իրաւունքը ցեղի, դոյնի կամ նախկին ստրկութեան վիճակի պատճառաւ Միաց. Նահանգաց կամ ռեւէ Նահանգի կողմէ պիտի չի ժխտուի կամ զլացուի:

Հատուած 2. Միաց. Նահանգաց Խորհրդարանը՝ պատշաճ օրէնսդրութեամբ՝ այս Յօդուածը հարկադրելու իշխանութիւն պիտի ունենայ:

ՅՕԴՈՒԱԾ ԺԶ.

Միացեալ Նահանգաց Խորհրդարանը իշխանութիւն պիտի ունենայ տուրք դնելու եւ տուրք հաւաքելու եկամուտներէն՝ ինչ անոքիւրէ ալ բղխած ըլլան անոնք՝ առանց զանազան Նահանգներու միջեւ բաշխումի, եւ առանց մարդահամարի կամ թուարկութեան նկատառումի:

ՅՕԴՈՒԱԾ ԺԷ.

Միացեալ Նահանգաց Ծերակոյտը պիտի բաղկանայ իւրաքանչիւր Նահանգի ժողովուրդին կողմէ վեց տարուան համար ընտրուած երկուական Ծերակուտականներէ, եւ իւրա-

քանչիւր Ծերակուտական մէկ քուէ պիտի ունենայ: Իւրաքանչիւր Նահանգի Ընտրողները Նահանգային Օրէնսդրական Մարմնոյ ամենաբազմաթիւ ճիւղին ներկայացուցիչ ընտրողներէն պահանջուած արժանիքները պիտի ունենան:

Երբ ռեւէ Նահանգի ներկայացուցչական աթոռը թափուր դառնայ Միաց. Նահանգաց Ծերակոյտին մէջ, նոյն Նահանգի դործադիր պաշտօնեան ընտրութեան հրամաններ պիտի հանէ այսպիսի թափուր աթոռները լեցնելու համար. այսպիսով որ սոյն Նահանգի Օրէնսդրական Մարմինը արտօնէ իր Նահանգի դործադիր պաշտօնեան ժամանակաւոր անուանումներ ընելու մինչեւ որ ժողովուրդը՝ Օրէնսդրական Մարմնոյ ուղղութեան տակ՝ նոր ընտրութեամբ լեցնէ թափուր աթոռը:

Այս բարեփոխութիւնը (Amendment) այն իմաստով պիտի չառնուի որ կարենայ ազդել ռեւէ Ծերակուտականի ընտրութեան կամ անոր պաշտօնավարութեան շրջանին, որ կատարուած է սոյն բարեփոխութեան Սահմանադրութեան վաւերական մէկ մասը դառնալէ առաջ:

ՅՕԴՈՒԱԾ ԺԸ.

Հատուած 1. Այս յօդուածին վաւերացումէն տարի մը յետոյ Միաց. Նահանգաց մէջ ոգելից ըմպելիք չիւնելը, վաճառելը, կամ փոխադրելը, կամ ոգելից ըմպելեաց Միաց. Նահանգներու եւ անոր իշխանութեան տակ եղող բոլոր երկիրներուն մէջ ներածութիւնը, կամ Միաց. Նահանգներէ եւ անոր իշխանութեան տակ գտնուող բոլոր երկիրներէն խմիչքի նպատակին ծառայելու համար ոգելից ըմպելեաց արտածումը արգիւրուած է:

Հատուած 2. Միաց. Նահանգաց Խորհրդարանը եւ բոլոր Նահանգները՝ պատշաճ օրէնսդրութեամբ՝ այս Յօդուածը հարկադրելու համար յարակից իշխանութիւն պիտի ունենան:

Հատուած 3. Այս Յօդուածը անդործադրելի պիտի ըլլայ, մինչեւ որ՝ ինչպէս պայմանադրուած է Սահմանադրութեան մէջ՝ Միաց. Նահանգաց Խորհրդարանի կողմէ անոր

Նահանգներու յանձնումէն սկսեալ եօթը տարուան ժամանակամիջոցին Նահանգային Օրէնդրական Մարմիններու կողմէ վաւերացուած ըլլայ իրեւ Սահմանադրական բարեփոխում մը:

ՅՕԴՈՒԱԾ ԺԹ.

Սեռի պատճառաւ Միացեալ Նահանգաց քաղաքացիներու ընտանիքներու իրաւունքը Միացեալ Նահանգաց կամ ո'րեւէ Նահանգի կողմէ պիտի չի ժխտուի կամ կրճատուի:

ՅՕԴՈՒԱԾ Ի.

Հատուած 1. Նախագահին եւ Փոխ-Նախագահին պաշտօնավարութեան շրջանները պիտի վերջանան Յունուարի 20-րդ օրը, կէսօրին, եւ Ծերակուտականներուն ու Ներկայացուցիչներուն Յունուար 3-ին, այն տարիներուն երբ այսպիսի պաշտօնավարութեան շրջանները արդէն վերջացած պիտի ըլլային եթէ այս հատուածը վաւերացուած չըլլար, եւ այն ատեն իրենց յաջորդներուն պաշտօնավարութեան շրջանը պիտի սկսի:

Հատուած 2. Խորհրդարանը, առնուազն, տարին անգամ մը պիտի գումարուի, եւ այսպիսի ժողով մը Յունուարի 3-րդ օրը պիտի սկսի, եթէ ոչ, օրէնքով անոնք տարբեր օր մը պիտի կարգեն:

Հատուած 3. Եթէ, Նախագահի պաշտօնավարութեան շրջանին սկզբնաւորութեանը ընտրեալ Նախագահը մեռած ըլլայ, ընտրեալ Փոխ-Նախագահը պիտի ըլլայ Նախագահ: Եթէ, Նախագահական պաշտօնավարութեան սկզբնաւորութեանը դեռ Նախագահ մը ընտրուած չէ, կամ, եթէ, Նախագահ մը Նախագահութեան անյարմար դատուած է, այն ատեն ընտրեալ Փոխ-Նախագահը պիտի կատարէ Նախագահին դերը, մինչեւ որ Նախագահը իր պաշտօնին յարմար դատուի, եւ Խորհրդարանը, օրէնքի միջոցաւ, պէտք եղած կարգադրութիւնը պիտի ընէ. բայց երբ ո'չ ընտրեալ Նախագահը եւ ո'չ ալ ընտրեալ Փոխ-Նախագահը Նախագահութեան յարմար կը դատուին, այդ պարագային, պիտի յայտարարէ թէ՛ իրեւ Նախագահ

ո'վ պիտի պաշտօնավարէ եւ անոր ընտրութեան կերպը որոշէ, եւ այսպիսի անձ մը ըստ այնմ պիտի պաշտօնավարէ մինչեւ որ Նախագահն ու Փոխ-Նախագահը պաշտօնավարութեան յարմար դատուին:

Հատուած 4. Խորհրդարանը, օրէնքով, միջոց պիտի գտնէ, մահուան պարագային այն անձերէն մէկուն որոնցմէ Ներկայացուցչական Տունը Նախագահ մը կրնայ ընտրել՝ երբ ընտրութիւնը անոր վիճակուած է. եւ միջոց պիտի գտնէ, մահուան պարագային այն անձերէն մէկուն որոնցմէ Ծերակոյտը կրնայ Փոխ-Նախագահ մը ընտրել՝ երբ ընտրութիւնը անոր վիճակուած է:

Հատուած 5. Առաջին եւ երկրորդ Հատուածները այս Յօդուածի վաւերացումին յաջորդող Հոկտեմբերի 15-րդ օրը դորձադրութեան պիտի դրուին:

Հատուած 6. Այս Յօդուածը, օրէնքի յանձնուած թուականէն սկսեալ, եօթէ տարուան մէջ, մինչեւ որ տարբեր Նահանգներու Օրէնսդիր Ժողովներուն երեք-չորրորդին կողմէ Սահմանադրութեան իրեւ բարեփոխութիւն մը չի վաւերացուի, անդործադրելի պիտի ըլլայ:

ՅՕԴՈՒԱԾ ԻԱ.

Հատուած 1. Ամերիկայի Միացեալ Նահանգաց Սահմանադրութեան բարեփոխութեան տասնեութեորդ յօդուածը այսու յետս կոչուած է:

Հատուած 2. Միաց. Նահանգաց ուրեւ Նահանգի, Հողի կամ անոր պատկանող երկիրներու մէջ յանձնումը կամ դորձածութեան համար ոգելից ըմպելեաց փոխանցումն կամ ներածումը, ի զեղծումն անոնց օրինաց, այսու արգիւիւած է:

Հատուած 3. Յօդուածը, ինչպէս որ Սահմանադրութեան մէջ պայմանադրուած է, Խորհրդարանի կողմէ Նահանգներուն անոր յանձնումի օրէն սկսեալ՝ եօթը տարուան մէջ՝ տարբեր Նահանգներու մէջ դումարուած Պատգամաւորական Ժողովներու կողմէ մինչեւ որ չի վաւերացուի, անդործադրելի պիտի համարուի:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴՐՕՇԱԿԸ

ՄԷԿ ԴՐՕՇԱԿ, ՄԷԿ ՀԱՅՐԵՆԻՖ, ՄԷԿ ԱՍՏՈՒԱԾ

ԱՄԷՆՈՒՆ ՎՐԱՅ

Բոլոր քաղաքակրթեալ երկիրներ իրենց հայրենիքը ներկայացնող խորհրդանշաններ ունին: Երբ դրօշակի մը վրայ կը նայինք անմիջապէս այդ դրօշակը ներկայացնող երկրին կառավարութեան ու պատմութեան վրայ կը խորհինք: Կը յիշենք որ դրօշակը կը ներկայացնէ երկրի մը սկզբունքները: Եթէ այդ սկզբունքները մեծ են՝ այդ դրօշակին վրայ կը հիանանք: Ազդէի մը դրօշակը կը ներկայացնէ երկրին իւրաքանչիւր անձը որ դայն կը սիրէ ու անոր համար կը դործէ: Կը ներկայացնէ իւրաքանչիւր անձ որ անոր համար մեռաւ: Մեր դործով եւ մեր կեանքով է որ մեր երկիրը կը լաւցնենք ու կը մեծցնենք:

Ամերիկեան Դրօշակին նախատիպը Յունիս 14, 1777-ին Ցամաքային Խորհրդարանին (Continental Congress) կողմէ որդեգրուեցաւ: Այդ դրօշակը ունէր տասն եւ երեք ճերմակ աստղեր՝ զետեղուած կապոյտ դաշտի մը մէջ՝ նշանակելով սկզբնական տասն եւ երեք Նահանգները եւ ունէր, նաեւ, տասն եւ երեք կարմիր ու ճերմակ շերտեր: Այսօրուան Դրօշակը՝ կապոյտ դաշտի մը մէջ զետեղուած՝ քառասուն եւ ութն աստղեր ունի, որոնք այժմու քառասուն եւ ութն Նահանգները կը ներկայացնեն: Ամերիկեան Դրօշակը (Stars and Stripes) արդար պատերազմներու մէջ ութն անգամ ծածանած է — եօթն անգամ օտար թշնամիներու դէմ, եւ անգամ մըն ալ Միջ-Նահանգային Պատերազմի մէջ: Իւրաքանչիւր պայքարի մէջ ան Ազգին պատիւը պաշտպանած է: Այսօր մեր Դրօշակը 3,690,320 քառ. մղոն ընդարձակութեամբ հողի մը վրայ կը ծածանի եւ 118,000,000 անձեր կը պաշտպանէ:

Այս Դրօշակը իւրաքանչիւր մարդու, կնոջ եւ տղայի համար ազատութիւն, արդարութիւն եւ հաւասարութիւն կը նշանակէ, եւ «Աստեղադարձ Դրօշակ», “Star Spangled

Banner” կը կոչուի: Ան կը կոչուի, նաեւ, «Աստղեր եւ Շերտեր», “Stars and Stripes” եւ՝ իրրեւ ազատութեան խորհրդանշան՝ երկրին ամէն մէկ շէնքին վրայ կը ծածանի:

ԴՐՕՇԱԿԻ ՕՐԷՆՔՆԵՐ

Օրէնքներ կան՝ որոնք Դրօշակը նենգամիտ ու տգէտ զեղծումէ կը պաշտպանեն: Այս օրէնքները կը պատժեն ամէն անոնք՝ որոնք կը ծայրատեն, կը կոխկուտեն, երեսը կ'աւրեն կամ Ամերիկեան Դրօշակը կ'անպատուեն: Մի՛ թոյլատրեր որ ո'ւեւէ մէկը ո'չ խօսքով եւ ո'չ ալ դործքով Ամերիկեան Դրօշակը արհամարհէ կամ անպատուէ:

Շատ մը Նահանգներու մէջ Դրօշակին վրայ առարկայ կամ ազդադիր կախել, կամ ո'ւեւէ դիր տպել եւ կամ դայն ասեղնադործել եւ անոր վրայ նշան ու պատկեր դրօշմելը օրէնքի դէմ է:

Դրօշակը յայտարարութեան նպատակի համար դործածելը օրէնքի դէմ է:

Դրօշակը իրրեւ վաճառադրոշմ (trade-mark) եւ կամ վաճառադրոշմի հետ դործածելը օրէնքի դէմ է:

Օրէնքը կը պահանջէ որ Դրօշակը հանրային դպրոցներու շէնքին վրայ եւ կամ անոր ճակատէն ցուցադրուի: Անոր պատմութիւնն ու նշանակութիւնը դպրոցի աշակերտներուն ուսուցուի: Անոնք դայն յարգել ու սիրել եւ անկէ ակնածիլ կը սորվեցնեն: Քանի մը Նահանգներու դպրոցներուն մէջ Դրօշակին համար ամէն օր յարգանքի արարողութիւն կը կատարեն:

Բոլոր Նահանգներու մէջ ամէն տարի Յունիս 14-ը իրրեւ «Դրօշակի Օր», «Flag Day» տօնելը սովորութեան կարգ անցած է: Ասիկա, այլեւս, սկսած է ազգային օր մը դառնալ: «Դրօշակի Օր»ը, Դրօշակը պղտիկներուն ծանօթացնելու համար, հայրենասիրական մարդանքներ կը կատարուին: «Դրօշակի Օր»ը պղտիկներուն կ'ուսուցուի թէ՛ ինչո՞ւ համար պէտք է դայն սիրեն, եւ՝ եթէ պէտք ըլլայ՝ իրենց կեանքով իր բոլոր թշնամիներէն դայն պաշտպանեն:

Ազատութիւն սիրողները հիմնեցին Ամերիկան, եւ Ամերիկա կ'սպասէ որ ամէն անոնք՝ որոնք հոս կուգան, սիրեն, մեծարեն ու պաշտպանեն այն դրօշակը որ իրենց պահապանն է: Դրօշակը ազատ ժողովուրդի մը խորհրդանշանն է:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԴՐՕՇԱԿԸ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ի՞նչ ՊէՏ ԳԵՏԻ ԵՒ ՅԱՐԳԵԼ ԶԱՅՆ

Ի՞նչ ՊէՏ ԳԵՏԻ ԵՒ ՊԱՐԶԵԼ ԶԱՅՆ

Հիմնուած Դրօշակի Օրինադրքին վրայ, որ Ընդունուեցաւ Յունիս 14, 1923-ին զուամարուած Դրօշակի Համաժողովին կողմէ

Վերաքննուած եւ Վաւերացուած, Մայիս 15, 1924-ին, Ազգային Խորհրդ-դակցութեան Երկրորդ Համաժողովին մէջ, ի Ուաշինկթըն:

Ամերիկեան Դրօշակը մեր երկրին խորհրդանշանն է: Պէտք է որ ամէն մարդ, կին եւ պղտիկ՝ Ամերիկացի թէ օտարական՝ յարգեն դայն: Մեր Դրօշակին համար մարդիկ մեռած եւ կենդանի զոհաբերած են ամէն ինչ որ իրենց համար սիրելի էր, որպէս զի ան ազատ ժողովուրդի մը վրայ ծածանի:

1. Դրօշակը պէտք է որ պարզուի միայն արեւծագէն մինչեւ արեւմուտ, եւ կամ պատշաճ հեղինակութեանց կողմէ որոշուած ժամերու միջեւ: Ան պէտք է որ ծածանի Նահանգային եւ Ազգային տօներուն, եւ պատմական ու մասնաւոր պարագաներու ատեն: Դրօշակը դրօշաձողին վրայ պէտք է միշտ արագ կերպով պարզուի եւ կամաց կամաց ու արարողութեամբ վար առնուի:

2. Թափօրի մէջ ուրիշ դրօշակի մը կամ դրօշակներու հետ կրուած ատենը, Միացեալ Նահանգաց Դրօշակը յառաջընթաց սիւնակին աջ կողմը պէտք է ըլլայ, այսինքն, նոյն ինքն դրօշակին աջ կողմը, եւ կամ, եթէ թափօրին մէջ ուրիշ դրօշակներու շարք մըն ալ կայ, Միացեալ Նահանգաց դրօշակը կրնայ դետեղուիլ միւս դրօշակներուն կեդրոնը եւ քիչ մը առաջ:

3. Երբ ան ուրիշ դրօշակի մը հետ խաչաձեւեայ դրօշաձողերով պատի մը վրայ կը ցուցադրուի, Ամերիկայի Միաց-

եալ Նահանգաց Դրօշակը աջ կողմը պէտք է ըլլայ, այսինքն, նոյն ինքն Դրօշակին աջ կողմը, եւ իր դրօշաձողը միւս դրօշակի դրօշաձողին առջեւը պէտք է ըլլայ:

4. Երբ Նահանգներու կամ քաղաքներու դրօշակները, կամ ընկերակցութիւններու դրօշները՝ համախմբուած իրենց դրօշաձողերուն վրայ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակին հետ միատեղ կը ցուցադրուին, Ամերիկեան Դրօշակը անոնց կեդրոնը եւ խումբին ամէնէն բարձր կէտը պէտք է ըլլայ:

5. Երբ Նահանգներու կամ քաղաքներու դրօշակները կամ ընկերակցութիւններու դրօշները Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակին հետ միեւնոյն չուանին (halyard) վերայ կը սաւառնին, վերջինը միշտ դադարէ պէտք է ըլլայ: Երբ անոնք յարակից դրօշաձողերէ կը սաւառնին, Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակը պէտք է ամէնէն առաջ պարզուի եւ ամէնէն վերջ վար առնուի: Ո՛չ մէկ դրօշակ կամ դրօշ իր նախկին դիրքին մէջ սաւառնած ատեն Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակէն վեր՝ եւ ոչ ալ իրենց վերջին դիրքին մէջ անոր աջ կողմը կրնան դադարէ, այսինքն, դիտողին ձախ կողմը:

6. Երբ երկու կամ երեք ազգերու դրօշակները միատեղ կը պարզուին, անոնք դատ դատ եւ միեւնոյն բարձրութիւն ունեցող դրօշաձողերէ պէտք է սաւառնին եւ դրօշակները մօտաւորապէս հաւասար մեծութիւն պէտք է ունենան: (Միջադաշին սովորութիւնը խաղաղութեան մէջ կ'արգիլէ որ երկրի մը դրօշակը միւս երկրին դրօշակէն վեր պարզուի):

7. Երբ պատուհանի շեմէն, պատշգամբէն, եւ կամ շէնքի ճակատէն Դրօշակը հորիզոնական դիրքի մէջ կամ անկիւնի մը վրայ (at an angle) կը ցուցադրուի, Դրօշակին աստեղադարձ մասը (The union of the Flag) դրօշաձողին մինչեւ վերջին ծայրը պէտք է երթայ, ի բաց առեալ այն պարագային երբ Դրօշակը կիսով պարզուած (half-staff) է: (Երբ Դրօշակը տունէն դէպի մայթին ծայրը տնկուած ձողի մը երկարող չուանէ մը կախուած է, Դրօշակը պէտք է պարզուի

տունէն դուրս դէպի ձողը, աստեղաղարդ մասը միշտ առաջ պահելով) :

8. Երբ Դրօշակը դրօշաձողին վրայ սաւառնելէն տարբեր կերպով կը ցուցադրուի, այն ատեն, ըլլայ ներսը թէ դուրսը, տափարակ դիրքի մէջ պէտք է ցուցադրուի: Երբ ան պատի մը վրայ հորիզոնական կամ ուղղահայեաց դիրքի մէջ կը ցուցադրուի աստեղաղարդ մասը վերին դիրքի մէջ եւ Դրօշակին դէպի աջ կողմը պէտք է ըլլայ, այսինքն, դիտողին ձախը: Երբ ան պատուհանի մը մէջ կը ցուցադրուի՝ միեւնոյն կերպով պէտք է ցուցադրուի, այսինքն, աստեղաղարդ մասը փողոցին մէջ դիտողին ձախ կողմը ինչայ: Երբ կապոյտ, ճերմակ ու կարմիր դոյներով դրասանդներ (festoons), վարդիկներ (rosettes), եւ սրահակներ (drapings) կը փափաքուի, պէտք է այդ դոյներով պաստառ դործածել: Բայց, Ամերիկան Դրօշակը այս նպատակին համար երբեք պէտք չէ դործածել:

9. Երբ Դրօշակը փողոցին կեդրոնին վրայ կը պարզուի, ինչպէս երկու շէնքերու միջեւ, Դրօշակը ուղղահայեաց պէտք է կախուի, այնպէս որ աստեղաղարդ մասը դէպի հիւսիսի կողմը ինչայ՝ եթէ փողոցը Արեւելքէն դէպի Արեւմուտ զնացք ունի. կամ պէտք է դէպի Արեւելքի կողմը ինչայ՝ եթէ փողոցը Հիւսիսէն դէպի Հարաւ զնացք ունի:

10. Երբ Դրօշակը բեմէն առանց դրօշաձողի տափարակ դիրքի մէջ կը դործածուի, ատենախօսին ետեւը եւ անկէ վեր դիրքի վրայ պէտք է պարզուի: Եթէ Դրօշակը դրօշաձողէն սաւառնող դիրքի մէջ կը դործածուի, պէտք է ան ատենախօսին աջ կողմը՝ պատուոյ դիրքին մէջ դտնուի: Դրօշակը ատենախօսին սեղանը ծածկելու, կամ ատենախօսին բեմը պատելու համար երբեք պէտք չէ դործածուի:

11. Երբ Դրօշակը արձան մը կամ յուշարձան մը քողարկելու առիթով կը դործածուի, ան արարողութեան որդիք մէկ հանգամանքը պէտք է կազմէ. բայց, Դրօշակը արձանին իրբեւ ծածկոց երբեք պէտք չէ դործածուի:

12. Դրօշաձողին վրայ կիսովի սաւառնած դիրքի մէջ (half-staff) դործածուած պահուն, առաջ Դրօշակը պէտք է ըսպէ մը դրօշաձողին մինչեւ ծայրը պարզուի, եւ անկէ յետոյ միայն վար առնուի դէպի իր կիսովի-սաւառնած դիրքին մէջ եւ հոն պահուի. բայց, իրիկուան պահուն, դրօշակը վառ առնելէ առաջ զայն նորէն դրօշաձողին մինչեւ դադարէ բարձրաձնելու եւ յետոյ զայն վար առնելու է: Կիսովի-սաւառնած կը նշանակէ Դրօշակը վար քաշել՝ դրօշաձողին դադարին ու յատակին մինչեւ կէս հեռաւորութեան վրայ դրտնող տեղը: Եթէ տեղային պայմանները կը պահանջեն, այս դիրքէն շեղումը թոյլատրելի է: Յիշատակաց Օրին (Memorial Day) Մայիս 30ին, Դրօշակը՝ արեւծագէն մինչեւ կէսօր կիսովի պարզուած դիրքի մէջ կը սաւառնի եւ կէսօրէն մինչեւ արեւամուտ ամբողջութեամբ կանոնաւոր կերպով կը պարզուի, որովհետեւ Աղբը կ'ապրի եւ Դրօշակը ապրող Աղբին խորհրդանշանն է:

13. Սուգ յայտնելու համար անշարժ դրօշաձողերէն Դրօշակները կիսով պարզուած կը սաւառնին: Սակայն, երբ Դրօշակը պզտիկ դրօշաձողի մը վրայ կը սաւառնի, ինչպէս է թափառի մը մէջ, այդ պարագային, սուգ յայտնելու համար, սեւ պաստառէ երկու պզտիկ դրօշներ կը կցուին դրօշաձողի գեղարդածայրին, թոյլ տալով որ դրօշները բնական կերպին: Նախագահին թոյլտուութեամբ միայն դրօշակաձողին վրայ սեւ պաստառ կը դործածուի:

14. Մեռեալի մը արկղին իրբեւ ծածկոց դործածելու ատեն Դրօշակը այնպէս պէտք է զետեղել որ աստեղաղարդ մասը մեռեալին գլխուն եւ ձախ ուսին վրայ ինչայ: Դրօշակը մեռեալին հետ մէկտեղ դերեղման պէտք չէ իջեցուի, եւ ո՛չ ալ թոյլ տրուի որ ան դետին քսուի: Մեռելարկը՝ ոտքի կողմը առաջ՝ պէտք է կրուի:

15. Երբ Դրօշակը եկեղեցիին մէջ կը պարզուի, ժողովուրդին աջ կողմը՝ երբ ան կղերականին դէմ առ դէմ կը կենայ՝ դրօշաձողի մը վրայ պատուոյ դիրքին մէջ պէտք է պար-

դուռի: Սպասարկութեան դրօշակը, նահանգին դրօշակը կամ ուրիշ դրօշակ ժողովուրդին ձախ կողմը պէտք է ըլլայ: Եթէ Դրօշակը դասին մէջ կամ բեմին վրայ պիտի պարզուի, Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակը կդերականին՝ երբ ան ժողովուրդին դէմ առ դէմ կանգնած է՝ աջ կողմը՝ իսկ միւս դրօշակները անոր ձախ կողմը պէտք է ցուցադրուին:

16. Երբ Դրօշակը այնպիսի վիճակի մը մէջ է որ ցուցադրութեան համար իբրեւ պատշաճ խորհրդանշան մը այլեւս չի կրնար ծառայել, ան պէտք է որ մէկ կողմ նետուի կամ ունէ կերպով դործածուի որ Ազգային դոյներուն անակնածուրթին կրնայ նկատուիլ, այլ, ան ամբողջութեամբ, դուռնփակ՝ (private) եւ նախընտրաբար դայն վառելով՝ պէտք է ջնջուի, կամ ուրիշ մեթոտով մը որ համաձայն է այն անկան՝ ծանօթին եւ յարգանքին որ մեր երկիրը ներկայացնող խորհրդանշանին կը պարտինք:

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Թոյլ մի՛ տար որ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակին հանդէպ անակնածութիւն ցոյց տրուի:

2. Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակը ո եւ է անձի կամ բանի մը դէմ մի շարժեր (dip): Վաշտային, Նահանգային, կողմակերպական կամ հաստատութեան մը դրօշակները կը մատուցանեն այս պատիւը:

3. Դրօշակի աստեղադարձ մասը վար մի՛ պարզեր, բացի այն պարագայէն երբ ան կը դործածուի իբրեւ ազգանշան աշխի:

4. Միւս ունէ դրօշակ կամ դրօշ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակէն վեր՝ եւ եթէ միեւնոյն հաւասար դժի վրայ է՝ անոր աջ կողմը մի՛ դնէր:

5. Մի՛ թողուր որ Դրօշակը գետին կամ տախտակամած դպի, կամ անոր ծայրը ջուրի մէջ քսկռտուի:

6. Ո՛րեւէ առարկայ կամ ո՛րեւէ տեսակ խորհրդանշան Ա-

մերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակին վրայ կամ անկէ վեր մի դնէր:

7. Դրօշակը իբրեւ վարադոյր մի՛ դործածեր, հոգ չէ թէ ի՞նչ ձեւով կամ ի՞նչ որ ալ ըլլայ: Այս նպատակին համար կապոյտ, ճերմակ ու կարմիր պատառ դործածէ:

8. Դրօշակը մի՛ կապեր այնպիսի կերպով որ կրնայ դիւրութեամբ պատռուիլ:

9. Ունէ կառքի, շողեկառքի կամ նաւի լօդիկը (hood) դադաթը, կողմերը, կամ կոնակը Դրօշակով մի՛ զարդարեր կամ պատեր: Երբ Դրօշակը ինքնաշարժ կառքի (motor car) մը վրայ կը պարզուի, դրօշաձողը ամուր կերպով պէտք է հաստատուի կառքին մարմնոյն վրայ, կամ րէտիէքը քէփին վրայ ամուր կերպով կապուի:

10. Թափորի մէջ եղող ցոյցակառի (float) վրայ իր դրօշաձողէն պէտք է պարզուի:

11. Դրօշակը ձեղունի իբրեւ ծածկոց մի՛ դործածեր:

12. Դրօշակը տափարակ կամ հորիզոնական դիրքի մէջ մի՛ կրեր. դայն միշտ օդին մէջ բարձր ու ազատ կրէ:

13. Դրօշակը տարադի մը կամ մարմնամարդական համադրեստի մը իբրեւ մաս մի՛ դործածեր: Զայն բարձերու կամ թաշկինակներու վրայ մի՛ ասեղնադործեր, եւ թուղթէ անձեռոցներու (paper napkins) կամ տուփերու վրայ դայն մի՛ տպեր:

14. Դրօշակին վրայ ունէ տեսակ գիր կամ նշանագիր մի՛ դնէր:

15. Դրօշակը ունէ յայտարարութեան մէջ մի՛ դործածեր, եւ ոչ ալ ցուցատախտակ (advertising sign) կապէ այն ձողին որմէ Դրօշակը կը սաւառնի:

16. Դրօշակը մի՛ պարզեր, դործածեր, կամ մթերել այնպիսի կերպով մը որ թոյլ տայ որ ան դիւրութեամբ աղտոտի կամ վնասուի:

Պաստառի (Bunting) Գործածութեան Պատշան կերպը

Ատենախօսին սեղանը ծածկելու համար կապոյտ, ճերմակ եւ կարմիր պաստառ պէտք է դործածուի. ինչպէս նաեւ, բնական հակառակ ծածկելու եւ ընդհանուր զարդարանքի համար նորէն բուրդէ պաստառ պէտք է դործածուի: Պաստառը այնպէս պէտք է կարդադրուի որ կապոյտը վերը, ճերմակը մէջտեղը եւ կարմիրը տակը դայ:

Դրօշակը Բարեւելու կերպը

Դրօշակը պարզելու կամ վար առնելու արարողութեան միջոցին, եւ կամ դրօշակը երբ անցահանդէսի մը կամ զօրահանդէսի մը (review) մէջ կ'անցնի, բոլոր ներկայ անձեր պէտք է դրօշակը դիմաւորեն, բարեւի կենան եւ դայն բարեւեն: Ներկաներէն անոնք որ ղինուորական համազօրեւորի մէջ են աջ ձեռքով պէտք է բարեւի կենան: Ներկայ մարդիկներէն անոնք՝ որոնք ղինուորական համազօրեւորով չեն, պէտք է աջ ձեռքով գլխարկին վար առնեն եւ դայն իրենց ձախ ուսին վերայ բռնեն՝ ձեռքը սրտին վրայ պահելով: Կիները իրենց աջ ձեռքը սրտին վրայ դնելով պէտք է բարեւեն: Յառաջընթաց զօրաշարժին մէջ կրօնող դրօշակը պէտք է բարեւել ճիշտ այն պահուն երբ դրօշակը առջեւէդ կ'անցնի:

Բարեւէ Դրօշակը, երբ Դրօշակին հաստումը կուտաս

Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակին հաւատարմութեան խոստում տալու կերպը, որ դպրոցներու մէջ վաւերացուած կերպն է, քաղաքային կեանքի մէջ ապրող (civilian) չափահասներու գործածութեան համար ալ յարմար է, հետեւեալ կերպն է.

Աջ ձեռքը սրտին վրայ կանգնած՝ ամէնքը միատեղ հետեւեալ խոստումը կը կրկնեն.

«Կը խոստանամ հաւատարմութիւն Ամերիկայի Միացեալ Նահանգաց Դրօշակին եւ անոր ներկայացուցած Հանրապետութեան, ամէնուն համար ազատութիւնով եւ արդարութիւնով մէկ ու անբաժանելի Ազգ:»

«Դրօշակին» — to the Flag — բառը արտասանուած պա-

հուն աջ ձեռքը, ալիք դուրս, դէպի դրօշակը կ'երկնցուի եւ մինչեւ վերջը այս դիրքին մէջ կը պահուի եւ երբ «ամէնուն համար արդարութիւն» «justice for all» բառերը կ'արտասանուին, ձեռքը վար կ'իջնէ:

Դրօշակին խոստում տրուած ատեն, սակայն, բոլոր այն չափահաս մարդիկ որոնք ներկայ են բայց խոստումին մասնակցողներ չեն, Դրօշակին միշտ կատարեալ յարգանք կը ցուցնեն, միմիայն գլխիբաց եւ ոտքի վրայ կանգնած մնալով: Զինուորական համազօրեւոր հաղած մարդիկ աջ ձեռքով պէտք է դրօշակը բարեւեն:

Ազգային երգին Բարեւը

Երբ National Anthem-ը կը նուագուի եւ Դրօշակ պարզուած չէ, ներկաները բոլորն ալ, ոտքի պէտք է կանգնին՝ երեսնին դէպի նուագածութեան կողմը դարձուցած: Անոնք՝ որոնք ղինուորական համազօրեւոր հաղած են Anthem-ին առաջին ձայնանիշին իսկ պէտք է բարեւեն, եւ այս դիրքը պահեն մինչեւ Anthem-ին վերջին ձայնանիշը:

Միւս բոլոր մարդիկ՝ գլխաբաց՝ ոտքի վրայ պէտք է կանգնին: Սակայն երբ Դրօշակը պարզուած է՝ Դրօշակին կանոնաւոր բարեւը պէտք է տրուի:

Ազգային երգը

(National Anthem)

Մարտ 3, 1931-ին, Խորհրդարանը օրէնք մը անցուց որով «The Star-Spangled Banner»-ը Միացեալ Նահանգաց Ազգային երգը ըրաւ:

ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ՀԱՒԱՏԱՄԲԸ

Կը հաւատամ Ամերիկայի Միացեալ Նահանգաց իբրեւ կառավարութիւն մը ժողովուրդէն, ժողովուրդով եւ ժողովուրդին համար, որուն արդար իշխանութիւնը կառավարողներու հաւանութենէն կը բղխի. ռամկավարութիւն մը հանրապետութեան մը մէջ. գերիշխան Ազգ մը ուրոյն գերիշխան Նահանգաց. կատարեալ Միութիւն մը, մէկ եւ անբաժանելի, հաստատուած ազատութեան, հաւասարութեան, արդարութեան եւ մարդկութեան սկզբունքներուն վրայ, որոնց համար Ամերիկայի հայրենասէրներ իրենց կեանքն ու հարստութիւնը գոհեցին:

Կը հաւատամ, ուրեմն, որ հայրենիքիս հանդէպ պարտականութիւնս է գայն սիրել, պահել անոր Սահմանադրութիւնը, հնազանդիլ անոր օրէնքներուն, յարգել անոր դրօշակը եւ գայն իր բոլոր քշնամիներէն պաշտպանել:

— William Tyler Page.

Ա Մ Ե Ր Ի Կ Ա

Գրուած՝ H. W. LIVERMORE-ի կողմէ

Ազգային Պահպանութեան Միաբանութեան Համար

1. Ամերիկա ազատութեան երկիրն է. ազատութիւն՝ օրէնքին հնազանդելու եւ ոչ թէ զայն անաստելու:

2. Ամերիկա ազատ խօսքի երկիրն է. ազատ՝ ջանալ միւսները համոզելու, բայց ոչ թէ զանոնք բռնադատելու:

3. Ամերիկա հաւասար պատեհութեան երկիրն է. պատեհութիւն՝ զործելու երբ եւ ինչպէս որ կ'ուզես, բայց չարդիւնելու որ ուրիշներն ալ միեւնոյնը ընեն:

4. Ամերիկա Արդար Բաշխումի (Square Deal) երկիրն է, որ կը նըշանակէ միւս մարդը ինչպէս դուն ինքդ:

5. Ամերիկա Հանրապետութիւն մըն է ուր ներկայացուցիչները ժողովուրդին կողմէ կ'ընտրուին:

6. Այս Կառավարութիւնը կրնայ փոխուիլ միայն կա'մ Սահմանադրութիւնը բարեփոխելով, կա'մ Յեղափոխութեամբ:

7. Սահմանադրութիւնը բարեփոխելը օրինական է, եւ դուն ազատ ես զայն բարեփոխելու համար: Յեղափոխութիւն մը սկսիլը ապօրինի է: Դուն ոչ թէ միայն ազատ ԶԵՍ աշխատես ընելու, այլ սկստի պատժուիս եթէ այլպէս ընես:

8. Ամերիկա աշխարհի ամէնէն ազատ եւ ամենալաւ կառավարութիւնը ունի: Կառավարութիւնը քու թշնամիդ չէ, այլ անիկա քու բարեկամդ է: Ան քեզ կը պաշտպանէ: Անիկա քու տէրը չէ, այլ քու ծառան է, եւ քու քուէներով կը վարուի:

9. Կառավարելու մէջ Ամերիկա Ոսկեղէն Կանոնը (Golden Rule) կը ներկայացնէ:

10. Սահմանադրութեան տակ Ամերիկա օրէնք եւ կանոն կը ներկայացնէ: Դուն ալ օրէնք ու կանոն կը ներկայացնես:

The Star-Spangled Banner

Oh, say, can you see, by the dawn's early light,
What so proudly we hailed at the twilight's last gleaming;
Whose broad stripes and bright stars, through the perilous fight,
O'er the ramparts we watched, were so gallantly streaming;
And the rocket's red glare, the bombs bursting in air,
Gave proof through the night that our flag was still there.

FIRST CHORUS

Oh, say, does the star-spangled banner yet wave
O'er the land of the free and the home of the brave?
On the shore, dimly seen thro' the mists of the deep,
Where the foe's haughty host in dread silence reposes,
What is that which the breeze, o'er the towering steep,
As it fitfully blows, half conceals, half discloses?
Now it catches the gleam of the morning's first beam,
In full glory reflected now shines on the stream.

SECOND CHORUS

'Tis the star-spangled banner, oh! long may it wave
O'er the land of the free and the home of the brave.
And where is that band who so vauntingly swore,
That the havoc of war and the battle's confusion
A home and a country should leave us no more?
Their blood has wash'd out their foul footsteps' pollution;
No refuge could save the hireling or slave
From the terror of flight or the gloom of the grave.

THIRD CHORUS

And the star-spangled banner in triumph doth wave
O'er the land of the free and the home of the brave.
Oh! thus be it ever when freemen shall stand
Between their loved home and the war's desolation.
Blest with vict'ry and peace, may the heav'n-rescued land
Praise the Pow'r that hath made and preserved us a Nation,
Then conquer we must, when our cause it is just,
And this be our motto, "In God is our trust."

FOURTH CHORUS

And the star-spangled banner in triumph
O'er the land of the free and the home of the brave

ՀՀ Ազգային գրադարան



ML0217313

502

1
1

34. 789